Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

6-7(544-545)
1.03.2019
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

Կա Մեծարենց, կա Տերյան, - եւ բաղում ուրիշ պոետներ կան,
Բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության:

Ե Չարենց

Քեզնում է ամեն մի ժողովրդի գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնության ամենախոշոր դրոշմը, պատմության ամենահեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ամենահեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

Հովհ. Թումանյան

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՄԵԿՆԱՐԿԵԺ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՎ

2019 թվականը հայոց երկու հանճարների՝ Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի տարին է՝ նրանց ծննդյան 150-ամյակներով պայմանավորված: Քաղաքակիրթ աշխարհը ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ նշում է այդ երկու մեծ հայերի հոբելյանները:

Փետրվարի 19-ին՝ Թումանյանի ծննդյան օրը, Ամենայն Հայոց բանաստեղծի շունչն էր թևածում Արցախի բոլոր կրթօջախներում: Օրը թումանյանական շնչով բացվեց նաև Արցախի մայրաքաղաքում: Արդեն 11 տարի է՝ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը Հայաստանի և Արցախի գրողների միությունները հռչակել են որպես Գիրք նվիրելու օր: ԼՂՀ ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանը Արցախի գրողների միության և «Գրիգոր Նարեկացի» համալսարանի նախաձեռնությամբ Հովհ. Թումանյանին կերպավորելով՝ առավոտվանից շրջում էր Ստեփանակերտի փողոցներով՝ մեծ բանաստեղծի ստեղծագործություններն արտասանելով և գրքեր նվիրելով անցորդներին: Իսկ օրվա միջոցառումների շարքը գրողներն Արցախի գրական ընտանիքի ղեկավար Վարդան Հակոբյանի գլխավորությամբ սկսեցին Հովհ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցից՝ Ամենայն Հայոց բանաստեղծի հուշարձանին ծաղիկներ խոնարհելով ու նրա շուրջը աշակերտների և ուսուցիչների հետ զրուցելով, որոնց դարձյալ գրքեր նվիրեցին և արժևորեցին օրվա խորհուրդը: Վ. Հակոբյանն իր խոսքում նշեց, որ Թումանյանը համազգային և համահայկական երևույթ է, և նրա 150-ամյակը պետք նշվի ամբողջ տարի:

Թումանյանի ծննդյան օրը համաժողովրդական տոնախմբության ազդակ է:

☞ 2

Խաչիկ Դաշտենց

ՀԱՅԵՐԵՆ

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,
Մեր շուրջը խոսում են այլորեն,
Եկ խոսենք, եղբայր իմ,
Հայերեն:

Կուլ չերթանք այս ահեղ լափումին,
Թույլ չտանք մեր լեզուն ավերեն,
Եկ խոսենք, միշտ խոսենք
Հայերեն:

Մենք ունենք աշխարհում Մասիս սար,
Այդ սարը գալիս է դարերեն,
Նա անվերջ խոսում է
Հայերեն:

Զավակիդ հայկազյան դպրոց տար,
Եվ գրենք Մեսրոպյան տառերով,
Եկ խոսենք մեր անուշ
Բարբառով:

Մեր հանդեպ ապագա լուսեղեն,
Թող հնչի մեր լեզուն վեհորեն,
Թող այրվի մեր հոգին
Այդ հրեն:

Մեզ ցրեց մի բազուկ անօրեն,
Թե կուզես սերունդներ մեզ ներեն,
Մենք հայ ենք, եկ խոսենք
Հայերեն:

Այս օտար աշխարհի ցրտերում
Եկ սիրենք մեր լեզուն ջերմորեն,
Եկ վառենք ու վառվենք
Հայերեն:

ԷՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ, ԸՆԹԱՑՔԸ, ՈՒՂԻՆ...

Արդեն երկու տասնամյակ է՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ փետրվարի 21-ը նշվում է որպես Մայրենիի միջազգային օր: Աշխարհի բազմաթիվ երկրներ նշում են այդ տոնը: Արցախում այն պարզապես վերածվում է հայոց լեզվի հանդեպ հավատարմության յուրատեսակ արարողության: 88-ի Արցախյան շարժումը պայքար էր նաև մեր մայրենիի համար, որով կրթվում ու դաստիարակվում է մատաղ սերունդը:

Ամեն տարի ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունն այդ օրը հայտարարում է Մայրենիի միամսյակ, որի շրջանակում հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում անցկացվում են միջոցառումներ:

Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոցում տեղի ունեցած համաքաղաքային միջոցառմանը ներկա էր ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը:

Դպրոցի բակում հյուրերին երգ ու պարով, արտասանությամբ դիմավորեցին աշակերտները՝ նրանց նվիրելով մաշտոցյան այբուբենի պատկերազարդ տառեր: Ապա ուղեկցեցին դահլիճ, որտեղ անցկացվեց գրական-երաժշտական հանդես «Աստվածատուր, աստվածալույս իմ մայրենի» խորագրով:

Ամբողջ միջոցառումը ձոն էր մայրենիին և հայոց այբուբենն ստեղծող Մեծն Մաշտոցին՝ այր մի, որի «շահած ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեծ սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը (Պ. Սևակ):

Երեխաները գովերգեցին հայոց այբուբենի զինվորներին, որոնք 39-ն են, բայց մեծաթիվ զինվոր ունեցող մի ամբողջ բանակ արժեն: Այդ անվեհեր զինվորները ո՛չ դավ են նյութում, ո՛չ մահ, ո՛չ ավեր, այլ միայն գիտության լույս են տարածում: Մեսրոպյան սուրբ գրերով մենք դարերում մնացինք կանգուն, հայ մնացինք ու կմնանք դարեդար. «Այբուբեն չէ դա, բերդ է անմատույց, դուռ է փրկության, էությունն է մեր, ընթացքը, ուղին...» (Պ. Սևակ):

«Նա պիտի մեր առաջին ու վերջին սերը լինի, ի՞նչ ունենք աշխարհում, որ այսքան մերը լինի...». սահյանական սիրո այս բանաձևումը երեխաների շուրթերից հնչում էր որպես պատգամ, հավատարմության երդում:

Արյունարբու Լենկ Թեմուրի մասին տատի (ուս՝. Ն. Թամրազյան) պատմությունը թոռներին, ըստ որի՝ վանահայրը դաժան աշխարհակալին տվեց ոսկեղենը, միայն թե նա չավերի վանքում պահվող գրքերն ու մագաղաթները, հիշեցումն են այն խորիմաստ գաղափարի, որ անցողիկ են երկրային հարստությունները, մնայունը հոգևոր արժեքներն են:

Աշակերտները հպարտությամբ մեջբերեցին մեծանուն շատ գրողների խոսքերը հայոց լեզվի գեղեցկության, նրա արտահայտչականության նուրբ երանգի մասին: Իսկ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի բնութագրումը՝ «Լեզուն է ամեն մի ժողովրդի գոյության ու էության ամենախոշոր փաստը, մայրենիին մանավանդ սոցցանցերում, որն անկաշկանդ հարթակ է հաղորդակցման համար: «Լեզուն մեր մտածողությունն է, և այն անաղարտ պահելու համար պետք է մաքուր պահենք մեր միտքը»,- ասաց Ն. Աղաբալյանը: Նա պատրաստակամություն հայտնեց աջակցել դպրոցներին՝ հյուրընկալվել միմյանց և ներկայացնել իրենց միջոցառումները:

Լեզվի անաղարտության համար բոլորն են պատասխանատու, բայց այդ առաքելության խաչն ավելի շատ հայոց լեզվի և գրականության ուսուցիչներն են տանում: Արդեն ավանդույթ է դարձել Մայրենիի օրվա առթիվ նվիրյալ ուսուցիչներին նախարարության կողմից պարգևատրելը: Ն. Աղաբալյանն արարողության շրջանակում պատվոգրեր հանձնեց վաստակաշատ մանկավարժներ Իրա Սարինյանին (հ.11 ավագ դպրոց), Լյուդմիլա Բաղդասարյան-Յարամիշյան (հ.8 միջն. դպրոց), Լյուբա Անդրյանին (հ.10 հիմն. դպրոց), Ժասմեն Սարգսյանին և Տոնյա Օհանյանին (հ.3 միջն. դպրոց), Սվետա Ավանեսյանին (դասվար, հ.9 հիմն. դպրոց), Էմմա Ալեքսանյանին (դասվար, հ.10 հիմն. դպրոց):

ԿԳՍՆ լեզվի տեսչության պետ Արտակ Ղուլյանը ամփոփեց միամսյակի արդյունքները: Լավագույն ճանաչված Մարտունու հ.1, Ստեփանակերտի հ. 4, Մարտակերտի շրջանի Այգեստանի, Բերձորի հ. 1 դպրոցները խրախուսվեցին նվերներով և պարգևատրվեցին պատվոգրով:

Վերջում ցուցադրվեց լեզվի պետական տեսչության պատրաստած «Ե՛կ խոսենք, եղբայր իմ, հայերեն» տեսահոլովակը:

Սեփ. լրատվություն

ՄԵՆՔ ՈՒԽՏ ՈՒՆԵՆՔ

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ՄԵԿՆԱՐԿԵԺ ԳԻՏԱԺՈՂՈՎՈՎ

1 ☞ Միջոցառումների շարքը շարունակվեց Գանձասարում: Սուրբ Մկրտիչ եկեղեցում մոմավառությունից հետո Մ. Մաշտոցի անվան մատենադարանի Գանձասարի մասնաճյուղում «Թումանյանի ստեղծագործության ազգային ու համամարդկային ընդգրկումները և արդիականությունը» թեմայով գիտաժողովով, որին ներկա էին պետական այրեր՝ ԱՀ նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ, պաշտոնապես ազդարարվեց թումանյանական տարվա մեկնարկը:

Գիտաժողովը բացեց Արցախի ԳՄ նախագահ, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վարդան Հակոբյանը:

- Թումանյանը հոբելյաններին մոտենում էր բավականին ըմբռումով և բարձր գնահատականով: Շիրվանզադեի առիթով նա ասել է, որ, նշելով արժանավոր զավակների հոբելյանները, հարգանքի տուրք ենք մատուցում մեր ժողովրդի մտավոր աշխարհին, մեր հոգևորին, ինքներս մեզ, հայ ժողովուրդն ինքն իրեն հարգում է՝ նշելով իր արժանավոր զավակների հոբելյանները: Այսօր իրոք մեզ համար տոն է, համաժողովրդական տոն հայոց աշխարհում, աշխարհի բոլոր ծագերում. որտեղ թեկուզ մեկ հայ կա, այսօր հիշում է Թումանյանին:

Նա պատահական չհամարեց Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 150-ամյակը և այդ շրջանակում ԱՀ կրթության, գիտության և սպորտի ու մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունների հովանու ներքո «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ու գրողների միության կազմակերպած գիտաժողովն այս սրբատանն անցկացնելը: Թումանյանի ընթերցած առաջին գրքերից է Հասան Զալալյանների տոհմից սերված Սարգիս Զալալյանի «Ճանապարհորդություն ի մեծն Հայաստան» գիրքը, որը թումանյանական ստեղծագործության ակունքում է, քանի որ նրանում հայոց եկեղեցիների, վանքերի պատմությունն ու ազգագրությունն է: Եվ այն Թումանյանին ողջ կյանքում ուղեկցել է իր իմացություններով:



Օրվա խորհուրդն էր թևածում և այստեղ. գիտաժողովին հրավիրվածներն ու մասնակիցները գրքեր նվեր ստացան «Գրիգեր Նարեկացի» համալսարանի և Գրողների միության կողմից: Թումանյանական միջոցառումների սկիզբն օրհնեց Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև Սրբազան Մարտիրոսյանը: Նա, ինչպես և մյուս ելույթ ունեցողները Թումանյանի հետ կապված իրենց հիշողություններից պահեր ներկայացրին: Սրբազանի համար այդ պահերից մեկն իր ուսանող եղած ժամանակ թարգմանչական արվեստին նվիրված մի համաժողով էր, որտեղ տարբեր երկրներից թարգմանիչներ էին հավաքվել: Երբ արտասանվեց Թումանյանի թարգմանած «Զմեռվա իրիկունը» բանաստեղծությունը բոլորը ոտքի կանգնեցին և ծափահարեցին, քանի որ թարգմանությունն այնքան հարազատ է բնագրին, նրա հնչողությանը, որ բոլորն իսկույն հասկացան, որ դա Պուշկինի բանաստեղծությունն է: Պարգև Սրբազանը նկատեց, որ նման գիտահավաքներն ու մշակութային միջոցառումները նպաստում են այն բանին, որ կարողանանք դիմագրավել ոչ միայն զենքով, այլև գրչով:

Թումանյանի և Կոմիտասի տարվա առիթով շնորհավորեց ԱՀ ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը՝ ընդգծելով, որ հայերիս համար ամեն տարի է թումանյանական և կոմիտասյան, քանզի ավելի քան մեկ դար է՝ նրանք առաջնորդում են մեր ժողովրդին և 150 տարի անց էլ պատգամում չմոլորվել: Նախարարի վաղ մանկության հիշողությունները Թումանյանի մասին եղել են տատի

շնորհիվ, որն ընդամենը չորրորդ դասարան էր ավարտել, բայց անգիր գիտեր Թումանյանի բոլոր բանաստեղծություններն ու բալլադները: «Իսկ ամուսնուս մայրը՝ երջանկահիշատակ Եպրաքսյա Կարապետյանը, 20-րդ դարի լավագույն մանկավարժներից էր, իր մահկանացուն կնքեց 88 տարեկան հասակում՝ շուրթերին Թումանյանի խոսքը՝

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՞կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար»:

Ըստ Ն. Աղաբալյանի՝ Թումանյանի ֆենոմենն այն է, որ ստեղծել է այնպիսի ժառանգություն, որ յուրաքանչյուր սերունդ, և յուրաքանչյուր ոք նրան համարում է իրենը: «Քաղաքակրթության այս հանգրվանից զարմանալի ու անկարելի է թվում, թե ինչպես կարող էր 10 երեխայի հայրը կուլ չգնալ կենցաղին, այլ ապրել մեծ՝ տիեզերական կյանքով, ստեղծել հանճարեղ գործեր, թարգմանական գրականություն, ակտիվորեն զբաղվել քաղաքացիական, հասարակական գործունեությամբ, գլխավորել տասնյակ ընկերություններ և լինել այն բացառիկը, որին մեծարել են ժամանակակիցները»,- ասաց Ն. Աղաբալյանը: Ազգային իմաստնությունն ու ոգու արիությունը նրա շնորհներն էին, որոնք օգնում էին ճիշտ գնահատել ժամանակի մեր ազգային հիվանդությունները: Նրա հոդվածները կարելի է տպագրել առանց թվագրելու, և կթվա, թե հենց այսօր է գրել, այսօրվա իրողությունների մասին են: Նախարարը բոլորին մաղթեց Թումանյանի աչքերով ինքներս մեզ գնահատելու և նրա պես ապրելու կարողություն:

Իր ողջույնի խոսքում Արցախի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը երկու հանճարների հոբելյանին գումարեց մեծ վիպասան Լևոն Շանթի 150-ամյակը, որը Թումանյանի «Վերնատան» հիմնադիրներից էր: Նա նաև գոհունակությամբ ընդգծեց մեծ թվով ուսանողների մասնակցությունը գիտաժողովին: Եթե երիտասարդությունն ապրի Թումանյանով, մեր ապագան լինելու է հուսալի ձեռքերում, նկատեց նա:

Թումանյանի մեծությունն այն է, որ նա խորհուրդներ էր տալիս երիտասարդներին: Երվանդ Լալայանը երբ նախաձեռնեց իր հանրահայտ ազգագրական հանդեսը՝ 1895թ. հիմնադրելով Շուշիում, 1896-ի վերջին երբ տեղափոխեց Թիֆլիս, նրա առաջին խորհրդատուներից մեկը Թումանյանն էր: Նրա խորհրդով է Լալայանը նախաձեռնել Արևելյան Հայաստանի գավառների ազգագրական ուսումնասիրությունը, որի առաջին գրախոսն ու խմբագիրը Թումանյանն էր:

Գիտաժողովին ներկայացված էին շուրջ երկու տասնյակ զեկուցումներ, որոնք շոշափում էին Թումանյանի գրական ժառանգության տարբեր ասպեկտներ՝ մանկագրություն, արձակ, հոդվածներ, կապը ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային գրողների հետ, հասարակական-քաղաքական գործունեություն, ինչն ընդամենը մի փոքր մասն է մեծ գրողի, գեղագետի, ազգային գործչի, հումանիստի, մեծ հայի ստեղծածի: Դա ներկայացրին գրողներ, գրականագետներ, «Գրիգոր Նարեկացի» համալսարանի դասախոսներ, ուսանողներ:

Վ. Հակոբյանը «Պատկեր. առարկայականությունից դեպի էութենականը կամ ժամանակի և տարածության տարրալուծումը բառի մեջ» թեմայով իր զեկուցումն սկսեց երկու մեծերի՝ Պ. Սևակի և Հ. Մաթևոսյանի անդրադարձումներով: Սևակը, խոսելով Թումանյանի մասին, ասել է, որ մեր առաջին թումանյանագետը հենց ինքը Թումանյանն է: Իսկ Հ. Մաթևոսյանն ասել է, որ մենք Թումանյան ենք, առանց Թումանյան չկա հայ ժողովուրդ, և հայ ժողովուրդն էլ հենց ինքը Թումանյանն է: Առաջնորդվելով այս տրամաբանությամբ՝ բանախոսը եզրակացնում է. Թումանյանը ոչ միայն առաջին թումանյանագետն է, այլև առաջին ազգագրագետն ու ժողովրդագետը. «Թումանյանն աստվածային երևույթ է մեր ժողովրդի կյանքում, և գիտական միտքը բնականաբար անընդհատ զբաղվում է Թումանյանով»: Վ. Հակոբյանը կանգ առավ թումանյանագետ Լևոն Հախվերդյանի ուշագրավ գիտական մի հայտնության վրա, ըստ որի՝ Թումանյանի ստեղծագործությունների գլխավոր մետաֆորը «հառաչանք» բառն է, որի մեջ տեղավորվում է Թումանյանի ողջ ստեղծագործությունը: Վ. Հակոբյանն իր աշխատանքում հանգում է այն եզրակացությանը, որ Թումանյանի գլխավոր մետաֆորը մարդն է: Թումանյանը հառաչանքի մեջ գտնվող մարդուն է ներկայացրել: Ըստ նրա՝ խորհրդային տարիներին Թումանյանին դասագրքերում ներկայացրել են որպես նահապետական կյանքն արտացոլող հեղինակ: Սակայն Թումանյանը ոչ թե ներկայացրել է նահապետական աշխարհը, այլ նահապետական աշխարհում ապրող գեղջուկ մարդու մեջ՝ նրա երազը, տեսլականը: Եվ հենց այստեղ է երևում նրա ամբողջ նորարարությունը: Սա ցայտուն կերպով երևում է նրա «Հազարան բլբուլ» անավարտ հեքիաթ-պոեմի մեջ:

Բանախոսը Թումանյանին բնութագրեց որպես մեծ ողբերգակ («Հայոց վիշտը անհուն մի ծով…»), և այս առումով նա կանգնում է Նարեկացու կողքին:

Կյանքի վերջին տարիներին այսպիսի միտք է արտահայտել. մինչև հիմա իր ստեղծագործությունները ճիշտ չեն հասկացել, գալու է ժամանակ, իսկ դա շատ ուշ է լինելու, որ հասկանալու են: Մարդիկ կարդալու են իր գործերը և տեսնելու են, որ դրանցում բոլորովին ուրիշ բան կա, այն չէ, ինչ այդ պահին ասել է: Վ. Հակոբյանը կարծում է, որ այդ ժամանակը հիմա է, այսօր իսկապես փակագծերը բացվում են, և տեսնում ենք Թումանյանին իբրև մեծ փիլիսոփա, մեծ գրող, մեծ մտածող, մեծ գեղագետ, իսկապես անչափելի և համաշխարհային գրականության մեջ նա տեղ ունի: «Պատահական չէ, որ Չարենցն ասում է. «Կա Տերյան, կա Մեծարենց, և բազում այլ ուրիշ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»: «Եվ այսպիսի գնահատական համաշխարհային պոեզիայում տեղ ունեցող Չարենցի նման հզոր երևույթն է տվել: Հենց այս գնահատականի պատասխանն էլ մեզ մղում է պեղումների, հետազոտությունների, որպեսզի մենք իրոք Թումանյանի մեջ տեսնենք այն նոր բանը, որ նա ասել է: Թումանյանն իր մեջ ներկայացնում է մեր ժողովրդական բանահյուսությունը, ժողովրդի ամբողջ հարստությունը («Ինչ ունեցել է ժողովուրդը քո, հնում, անցյալում լուսավոր ու վեհ, ողջը հավաքել ու քեզ է տվել»): Սա Չարենցն է գրել Թումանյանի մասին, բայց Թումանյանի ինքնախոստովանության նման է հնչում,- ասաց Վ. Հակոբյանը՝ խոսքն ավարտելով Ստ. Զորյանի գնահատականով. «Եթե աշխարհում բարձրագույն բանաստեղծության մրցույթ լինի բոլոր ժողովուրդների միջև, մենք ունենք միայն մի բանաստեղծ, որ կարող է իր ստեղծագործությունները ներկայացնել և առաջնություն գրավել: Դա Թումանյանն է»: Վերստին շնորհավորելով Թումանյանի ծննդյան օրվա առթիվ՝ բանախոսն ասաց. «Եկեք փառք տանք Աստծուն, որ ունենք այսպիսի հզոր երևույթ: Բոլորս նրա պեզիայի երկրպագուներն ենք: Թումանյանի լույսը, որ վառվում ու հույս է դառնում, անսպառ է մեզ համար»:

«Գրիգոր Նարեկացի» համալսարանի գիտական կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու Ամալյա Գրիգորյանի զեկուցման թեման էր՝ «Գրողի քննադատական հայացքները և նրա արծարծած խնդիրների էությունը»: Նա ընդգծեց, որ Թումանյան մտածողի, գեղագետի գիտական մտահոգությունների շրջանակը բավականին լայն է ու ընդգրկուն: Գրողի հետաքրքրությունների տիրույթում առանցքային տեղ ունեն ժամանակի գրական, հասարակական խնդիրները և ոչ միայն: Իր հոդվածներում Թումանյանը մշտապես արծարծել է օրախնդիր հարցեր, որոնք ուղղակի և անուղղակի կերպով առնչվում են թե՛ գրականությանը, թե՛ արվեստին, թե՛ մամուլին: Ավելին, սրանք ներքնապես կապված են ազգային կյանքի հիմնախնդիրների հետ: Բանախոսը նշեց, որ սկսած 19-րդ դարի 50-ական թվականներից, Թումանյանը հանդես է գալիս գրական-քննադատական հրապարակումներով, որոնցում ներկայացնում է իր մտորումները, ցույց տալիս խոսքի զարգացման ճշմարիտ ուղին: Ընդգծելով հոգևոր մշակույթի կարևորությունը ժողովուրդների մտավոր առաջընթացի գործում՝ գրողը հաստատում է, որ ամեն մի ժողովրդի մեծության նշանը իր գրականությունն է: «Տաղանդ և բթամտություն» հոդվածում Թումանյանն անթաքույց վրդովմունքով փաստում է, որ հայ մամուլը, քննադատությունը հետին մտքերով, կուսակցական կրքերով, անձնական վիրավորանքով ծաղրել, հալածել են, հայհոյել ու ցեխն են կոխել իրենց չսիրած արվեստագետներին և հակառակը՝ որևէ սինլքորի տաղանդ են հռչակել, խրախուսել իրենց կուսակից համբակին, դրվատել մի շնորհազուրկ ոտանավորչու:

Անտարակույս, մեծ գեղագետը ճշմարիտ ու անողոք վերաբերմունք ուներ տգիտության, կողմնակալ վերաբերմունքի նկատմամբ և ամբողջ կյանքում պայքարել է այդ արատավոր երևույթների դեմ:

Լինելով բարձր պատասխանատվության տեր անհատականություն՝ ամենայն լրջությամբ ու խստությամբ է քննել ժամանակի գեղագիտական հարցերը, վերհանել նախընթաց և ընթացիկ գրականության առանձնահատկություններն ու խնդիրները, նախանշել ազգային գրականության զարգացման ճշմարիտ ուղին, փաստեց զեկուցողը: Թումանյանը համոզված է, որ գրողը որքան մոտ լինի իր երկրին ու ժողովրդին, որքան շատ խորանա ժողովրդական ստեղծագործության մեջ, այնքան մեծ է ու համամարդկային:



«Թումանյանը՝ ամենուրական» թեմայով զեկուցում ունեցավ նրա հետևորդներից մեր ժամանակի արձակի առաջնակարգ դեմքերից մեկը՝ Արտաշես Ղահրիյանը, որը նշեց, որ հայրենի մաքուր ակունքներից ու երկնային ոլորտներից է հյուսվել Թումանյանի հոգեաշխարհը: Նա ամեն ինչ ընկալել ու իմաստավորել է հանուն մարդ աստծո: «Չգիտեմ ում հետ համադրեմ նրան այլ մի ժողովրդի նույնարժեք մեծության: Ո՞վ է այդքան խոր թափանցում մանկան աշխարհը, ո՞վ է ժողովրդի դարավոր զրույցներից ու ավանդապատումներից պեղել մեզ համար անվերջ ընթեռնելի լեգենդ ու մանրապատում, վերստեղծել հայ ժողովրդական հեքիաթները ու էլի մոռացված շատ բան ու խոսք ավանդել այդքան գրավիչ, յուրովի արձակում: Աշխատավոր շինականի պատումներն են, որոնցում շնչում են հայրենի մարդը, գյուղաշխարհը, նոր երկիրը: Եվ վերջապես ո՞վ է գրելու հայ բանաստեղծության գլուխգործոց «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը՝ այդքան տառապագին, բայց և երկնային խաղաղություն ներշնչելով Հայոց ցեղասպանության զոհերի հոգիներին, ո՞ւմ բանաստեղծական հևքն էր ճախրելու տիեզերական անհունության մեջ՝ կերտելու համաշխարհային գրական արժեք՝ «Դեպի անհունը» պոեմը, քառյակները, ցավալիորեն կիսատ մնացած «Հազարան բլբուլը»,- հարցնում է բանախոսը:

«1921թ. Մոսկվայում՝ հիվանդանոցում հիվանդ պառկած, իմանալով, որ մի պատանի է հայտնվել, որի միտքը վերլուծում է տիեզերքի գաղտնիքները, Թումանյանը խնդրում է իր մոտ բերել 13 տարեկան այդ պատանուն, որը Վիկտոր Համբարձումյանն էր: Խոր զարմանքով ունկնդրելով տղայի գիտելիքները՝ նա գրում է հանրահայտ «Սիրիուսի հրաժեշտը»

ՄԻՇՏ ԴԵՊԻ ԼՈՒՅՍ

հրաշալի բանաստեղծությունը: Չեմ մոռացել հայր Համազասպ Համբարձումյանին, որը մեր կուրսին ավանդում էր անտիկ գրականություն և զավեշտալի գնահատականներ էր տալիս հին ու նոր գրողներին, պատմում թումանյանական «Վերնատան» եղելություններից: Երբ կուրսով խնդրեցինք գնահատել Թումանյանին, նա առավ կավիճն ու երկայնքով մեկ հաստ գիծ քաշեց գրատախտակին. ահա Թումանյանը՝ ասաց, այն դեպքում, երբ շատ ճանաչվածների ծուռ ու մուռ գծերով էր ներկայացնում»:

Ըստ նրա՝ Հովի. Թումանյանը հայոց բանաստեղծության ակնկալիքը տեսնում էր Նարեկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի բարձր գեղարվեստի ավանդույթում: Միջնադարյան մեր պոեզիան գրված էր պահում նրա միտքը ժողովրդյան մտածությամբ, որով ողողված են նրա բազմաժանր տարածքները:

Որքա՜ն խորն է նա առնչված ռուս և համաշխարհային գրական արժեքներին: Ընթերցել, ուսումնասիրել, գնահատել է, թարգմանել շատ ստեղծագործություններ այնպես, ասես սեփական գրչի արդյունք լինեն: «Ազգային կյանքի ու մշակույթի արտահայտիչը նաև համամարդկային համերաշխ ոգու ներշնչողն է, ինչպես Շեքսպիրը, Շիլլերը, Սերվանտեսը, Պուշկինն ու Լերմոնտովը… Կովկասյան հայ գրողների ընկերության նախագահը բորբոք էր պահում ու գրչին հանձնում հայության հույսերը՝ սկսած «Վերնատան» միջոցառումներից, որոնց այցելուներն էլ բազմաշերտ և երևելի շատ դեմքեր էին:

Հայ գեղջական դարավոր ու իմաստուն մշակութային զավակ էր Թումանյանը՝ կյանքով, ստեղծած ընտանիքով: Նա մեզ վերադարձրեց այն կատարյալ աստվածաշունչ մարդուն, որը հենց ինքն էր, և ում կերպարն անվերջ կերտել է բանաստեղծությունում ու պատմվածքում, մանկագրությունում ու հեքիաթում, իր կենցաղավարությունում ու միջավայրում: 10 զավակն ապացույցն է, որ նա գյուղացի էր՝ օժտված ամենամեծ առաքինություններով: Թումանյանը չէր խոչընդոտել իր Արտավազդ որդուն գնալ ու կռվել հայրենիքի փրկության համար և զոհվել: Այն Թումանյանը, որը Շիրվանզադեին ասում էր. «Ամբողջ ստեղծագործությունս կվառեի, միայն թե տղաս չզոհվեր»:

Արձակագիրը խոստովանում է. «Թումանյանն ամենքինս է: Նա այն օրվանից եղավ իմը, երբ 6-րդ դասարանի աշակերտս կարդացի՝ «Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց ժայռերը խորունկ, նոթերը կիտած…»: Ապա զարմանքով նայեցի Քիրսից ցած մեր Իշխանաձորին և այնպես տպավորվեցի, թե ինչ կատարվում է «Անուշ»-ում, նրա մյուս ստեղծագործություններում, մեր ձորում է կատարվում: Գյուղի որ տանը հարսանիք եղավ, կոխի բռնվեցին, մտածում էի, թե մեր անտառի որ խորքում Չալանկ շունը գրողի խոր մտորման մեջ որպես փշրանք թողեց մանուկ օրերի անմոռաց կանչը, այսպես անվերջ: Գրողը չհասցրեց գրել «Հազարան բլբուլ»-ը, որը լինելու էր «իրեն չասված խոսքը աշխարհին»:

«Ո՞ւմ հետ համադրեմ Մեծ Լոռեցուն, եթե ոչ Մեսրոպ Մաշտոցի, որի կյանքի կոչած 36 տառերը քանի՞ դար հայ են պահում բոլորիս, և Թումանյանը այդ տառերով բոլորիս համար անվերջ հյուսում է հայոց խոսքը»,- իր տպավորություններն այսպես ավարտեց արձակագիրը:



«Մեծ Լոռեցին և Շեքսպիրը». այս էր Արցախի գրական ընտանիքի նահապետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի զեկուցման թեման, որի կարծիքով, եթե Թումանյանը գար միայն բանահյուսությունից, անգիր ասեր միջնադարյան պոեզիան՝ Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա, դարձյալ Թումանյան չէր լինի, քանի որ ինքը՝ Թումանյանն էլ ասում էր, որ եթե գրողը բազմակողմանի զարգացած չէ, եթե համաշխարհային գրականություն չգիտի, նա մնայուն արժեքներ ստեղծել չի կարող: Եվ 10 երեխայի տեր գրողը, բանկերից ծանոթների միջոցով փոխառնելով բավականին գումար, ստեղծել է հայ իրականության մեջ իր հարուստ գրադարանը: Ընթերցում էր այդ ամենը և անպայման՝ մատիտը ձեռքին: Թումանյանը ոչ միայն դարձավ Շեքսպիրի սովորական ընթերցողը, այլև առաջինն էր մեզանում, որ բարձրաձայնեց, թե Շեքսպիրը բոլոր ազգերի գեղարվեստական մտածողության ամենաբարձր չափանիշն է: Նա շեքսպիրագիտության հիմնադիրն է մեր իրականության մեջ: «Եթե մի ժողովուրդ չի թարգմանում Շեքսպիրին, նշանակում է՝ տգետ է, եթե չի հասկանում, նշանակում է՝ տհաս է, եթե մի լեզու նրա վրա չի գալիս, կնշանակի՝ այդ լեզուն տկար է»,- ասել է Թումանյանը: Նա տեսավ, որ առանց Շեքսպիրի մեր ազգային թատրոնը երբեք չի կարող հասնել իր նպատակին, և ինքը լինելով մեծ հայրենասեր, ասում էր՝ բավական է ինչքան բեմադրել ենք կլասիցիզմի ոճով գրված մեր հայրենասիրական ողբերգությունները, թատրոնը պետք է ընդլայնի իր դարպասները, որպեսզի դառնա ոչ միայն ազգային, այլև համամարդկային գաղափարները ժողովրդին հասցնող մի օջախ», և նա դրանից ելնելով՝ խրախուսում էր առանձապես Պետրոս Ադամյանին:

Գիտաժողովն ամփոփիչ խոսքով եզրափակեց Վ. Հակոբյանը. «Ինչքան շատ ենք մոտենում Թումանյանին, այնքան համոզվում ենք, որ գրեթե չգիտենք նրան, տեսնում ենք, որ կա նոր Թումանյան: Ու եթե մենք գնանք դեպի այդ Թումանյանը, շատ բաներ կհայտնագործենք, մենք մեր ժողովրդին մեր մեջ ու ինքներս մեզ կհայտնագործենք: Թումանյանի ամբողջ գաղտնագրությունը հենց սրա մեջ է: Թումանյանը մեզ աչքեր է նվիրում՝ տեսնելու այն, ինչ մինչև հիմա չենք տեսել, նրա ցանկացած բառ իր վրա հազար դուռ ունի, քանի՞սն ենք բացել այդ դռներից. ամեն մեկս՝ հազիվ մեկ: Բայց փորձենք այդ դռների կողը իմանալ և ներս մտնել…»:

Գիտաժողովի վերջին ակորդը տվեցին ժողովրդական դերասան Քաջիկ Հարությունյանը, որը հիանալի ասմունքեց «Շունն ու կատուն», և «Գրիգոր Նարեկացի» համալսարանի ուսանողուհի Ռուզաննա Մելքումյանը, որը կատարեց հատված «Անուշ» օպերայից:

Թումանյանական միջոցառումները շարունակվում են:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՇՐՋԱՆԻ ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ՆԱԽԱՐԱՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ասկերանի շրջանի վարչակազմի ղեկավար Հակոբ Ղահրամանյանի նախաձեռնությամբ փետրվարի 26-ին վարչակազմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանի հանդիպումը շրջանի հանրակրթական հաստատությունների տնօրենների, փոխտնօրենների հետ:

Ողջունելով ներկաներին՝ վարչակազմի ղեկավարը նշեց, որ նման ձևաչափով հանդիպման նպատակը շրջանի հանրակրթական դպրոցներում առկա հիմնախնդիրներն ու թերությունները վերհանելն ու դրանց լուծման համար համատեղ ուղիներ փնտրելն է:

Խոսելով տնտեսական, ռազմական զարգացած պետության տեսլականից՝ Հ. Ղահրամանյանը կարևորեց այս գործում հանրակրթական դպրոցների դերն ու նշանակությունը: «Գաղտնիք չէ, որ զարգացած երկիր կառուցելու համար մենք առաջին հերթին պետք է ունենանք գիտելիքահենք տնտեսություն, ինչը հնարավոր կլինի միայն առաջադեմ դպրոցի առկայության պարագայում: Պետության տնտեսական շարժիչ ներուժը լինելուց բացի դպրոցը մատաղ սերնդի դաստիարակության հիմքն է և կարևոր նշանակություն ունի բոլորիս համար»,- ասաց Հ. Ղահրամանյանը՝ փաստելով, որ պետությունը բավականին միջոցներ է հատկացնում ուսուցչի դերի, առաքելության, մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ, կազմակերպվում են վերապատրաստման դասընթացներ, ու թե ինչքանով են դրանք ծառայում իրենց նպատկին, ցույց կտա ժամանակը:

Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը ներկայացրեց շրջանի հանրակրթական դպրոցների մասին ամփոփ տեղեկություններ, համեմատականներ անցկացրեց նախորդ և ընթացիկ տարվա առարկայական օլիմպիադաների միջև՝ ընդգծելով, որ այս տարի մեծացել են բնագիտական առարկաների նկատմամբ աշակերտների հետաքրքրությունները: «Մեր հիմնական գործունեությունը եղել և մնում է աշակերտին ոչ միայն գիտելիքներով զինելը, այլև նրան կյանքին նախապատրաստելը: Արդյունավետ է այն աշխատանքը, որտեղ առկա է ուսուցիչ-աշակերտ-ծնող եռակողմ սերտ կապը»,- ասաց Կ. Մայլիյանը՝ նշելով, որ հանրակրթական հաստատությունների հետ սերտ համագործակցությունն առկա է, ինչի արդյունքում բավականին հարցեր տեղերում լուծում են ստանում, և այսուհետ ևս այդ ուղղությամբ համակարգված աշխատանքներ կտարվեն:

ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը կարևորեց պետության կայացման գործում կրթության դերը: Պետք է ներդրվեն բոլոր ջանքերը՝ համագործակցության արդյունքում հասնել ցանկալիին: Ներկայացնելով ԿԳ նախարարության կրթական ծրագրերի ուղղությամբ տարվող ռազմավարությունը՝ նշեց սպասվելիք միջոցառումները՝ ակնկալելով դպրոցների ակտիվ մասնակցությունն այդ ծրագրերին: Մարտ ամսում նախատեսվում է անցկացնել արցախյան կրթական 1-ին համաժողովը, որին կհրավիրվեն ինչպես ուսուցիչներ, այնպես էլ կրթության փորձագետներ և ոլորտում մեծ հաջողությունների հասած մասնագետներ: Համատեղ քննարկումների արդյունքում կներկայացվեն նորարություններ, կրթական ծրագրերի նոր մեթոդներ: «Իրականում դպրոցական բարեփոխումների առանցքում դպրոցների համապատասխանեցումն է նոր սերնդի կրթությանը, իսկ չափանիշները նոր սերնդի ուսուցիչներն են: Պետք է ապահովել լավագույն մասնագետների մուտքը դպրոց, ինչն իրականություն դարձնելու համար նախարարությունում մի շարք միջոցառումներ ենք նախատեսում»,- ասաց նա՝ հորդորելով դպրոցներում դասաբաշխում կատարելիս առաջնահերթ նկատի ունենալ որակյալ ուսումը, այլ ոչ թե ուսուցչի ծանրաբեռնվածությունը:

Խոսելով գյուղական բնակավայրերում առկա արտահոսքի մասին՝ ասաց, որ խնդիրը բավականին լուրջ մոտեցում է պահանջում, ինչը մեծապես կախված է դպրոցներում տարվող աշխատանքներից: Այս հարցում կարևոր է դպրոց-համայնք համագործակցությունը: «Ըստ իս, երեխայի համար որևէ բանաձև իմանալուց պակաս կարևոր չէ շրջակա միջավայրի մասին հստակ տեղեկություններ իմանալը: Երեխաներին պետք է սովորեցնել դնել մեծ նպատակներ և երազել»,- նշեց նախարարը՝ հայտնելով, որ առաջիկայում նախարարությունը ձեռնարկել է «Աշխարհի ամենալավ անկյունը» միջոցառումը, որին կմասնակցեն բոլոր հանրակրթական դպրոցները՝ ներկայացնելով տեսաֆիլմ, որտեղ նկարագրված կլինի տվյալ բնակավայրի գրավչությունը:

Դպրոցներում առաջընթաց ապահովելու գործում նախարարը կարևորեց նաև նրանց միջև փոխգործակցությունը, Արցախում, Հայաստանում, Սփյուռքում քույր դպրոցներ ունենալու անհրաժշտությունը.

- Փորձը ցույց է տվել, որ դա ոչ միայն նպաստում, այլև բավականին խոշոր նշանակության խնդիր է լուծում: Օրինակ՝ Ստեփանակերտի 7-րդ դպրոցի և ամերիկյան մի դպրոցի համագործակցության շնորհիվ 7-րդ դպրոցը հաստոցներ է ձեռք բերել, որը մեծ արդյունավետություն է հաղորդում «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդմանը:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաև «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների, բնագիտական առարկաների ժամաքանակի, մասնագետների, մասնավորապես ֆիզիկայի ուսուցչի պակասի, «Աշխարհագրություն», «Պատմություն» առարկաներում Արցախի մասին տեղեկություններ ավելացնելու վերաբերյալ:

Ն. Աղաբալյանը նշեց, որ տարեցտարի հանրապետությունում ավելանում է «Արմաթ» լաբորատորիաների քանակը, ինչը հնարավորություն է տալիս երեխաներին ծանոթանալ նորարարական տեխնոլոգիաներին, վերհանել նրանց հմտությունները: Իսկ բնագիտական առարկաների հանդեպ սեր առաջացնելու համար այս տարվանից օլիմպիադաներում լավագույն ցուցանիշներ արձանագրած աշակերտների համար կսահմանվի կրթաթոշակ: Ինչ վերաբերում է Արցախի մասին տեղեկություններ, դասաժամեր հատկացնելուն, տվյալ առարկայի ուսուցման համար նախատեսված այցելությունները պատմական և տեսարժան վայրեր հենց նշյալ խնդիրների լուծմանն են միտված:

- Ընդհանրապես բոլոր տեսակի ծրագրերի առանցքում պետք է լինեն աշակերտը, նրա հետաքրքրություններն ու հմտությունները՝ չանտեսելով կարևորագույնը՝ նրա առողջությունը: Ուսուցիչը կոչված է աշակերտի հմտությունները վերհանելուն, կարողությունները բացահայտելուն, որը նրա հիմնական առաքելությունն է,- շեշտեց ԿԳՍ նախարարը:

Նարինե Աղաբալյանը հայտնեց, որ այս տարվա կապիտալ ներդրումային ծրագրերում նախատեսված է Նախիջևանիկի միջնակարգ դպրոցի վերանորոգումը: Նա կոչ արեց դպրոցներում առկա հիմնախնդիրների մասին բարձրաձայնել մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը, որպեսզի կարողանան օպտիմալ լուծումներ տալ դրանց:

Ներկաներին հուզող հարցերին պարզաբանումներ տվեցին նաև վարչակազմի ղեկավար Հակոբ Ղահրամանյանը, ԿԳ փոխնախարար Միքայել Համբարձումյանը:

Ինչպես նշեց շրջվարչակազմի ղեկավարը, նման հանդիպումներն այսուհետ շարունակական բնույթ կկրեն: Նախարարը պատրաստակամություն հայտնեց մասնակցել այդ հանդիպումներին:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԵՐ ԿՅԱՆՔԸ ԿԱՐՃ ՄԻ ՎԵՐԵԼՔ...

«ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՎԵՑԵՐՈՐԴ ԶԳԱՅԱՐԱՆՆ ԷՐ»...

«Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ, ադամանդն է ճակատահա կատարյալ առաջնորդը»:

Գարեգին Նժդեհ

Փետրվարի 16-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ Արթուր Մկրտչյանը կդառնար 60 տարեկան: Նա կարող էր այսօր լինել մեզ հետ, մեր կողքին, բայց քաղաքականության մեջ բարոյականության օրենքներով առաջնորդվող մարդու համար դժվար ու անհնարին եղավ դիմակայել այդ խառնակ ժամանակների մամլիչին: Արցախցու համար նա մնաց բացառիկ քաղաքական գործիչ, որն ազնիվ մտավորականի ու լայնախոհ պատմաբան-գիտնականի իր նկարագրով, սկզբունքայնությամբ և օրինավորությամբ, ազգային-ազատագրական պայքարին իր նվիրվածությամբ կարողացավ ժողովրդի մեջ սեփական ուժերի հանդեպ վստահություն ներշնչել: Պատեհապաշտություն, իշխանատենչություն ու աթոռակռիվ արհամարհող նրա տեսակը ժողովրդին ծառայելու բարձրագույն տիպար կարող էր ծառայել, որը դեռ երկար ժամանակ ընդօրինակելու արժանի կհամարվի: Իր շուրջը համախմբելով գաղափարական ու անձնազոհ նվիրյալների մի հզոր փաղանգի՝ նա կարող էր հայկական երկրորդ պետության անկախ ընթացքն այլ հունով ուղղորդել: Նրան ճանաչողներից հաճախ կարելի է լսել. «Եթե այսօր նա կենդանի լիներ, մենք այլ երկիր կունենայինք»... Բայց պատմությունը «եթե»-ներ չի սիրում, և հարազատների ու մտերիմների համար Արթուր Մկրտչյանը հավետ մնաց... 33 տարեկան:

Սովորականի պես այս ծննդյան տարեդարձն էլ մարդաշատ էր մայրաքաղաքի հուշահամալիրը. նրա գերեզման-հուշաքարին այցի էին եկել և ծաղիկներ խոնարհել Արցախի նախագահ Բակո Սահակյանը, օրենսդիր և գործադիր իշխանության ներկայացուցիչներ, կուսակցական ընկերները, բարձրաստիճան զինվորականներ, հարազատներն ու երբեմնի գործընկերները: Փետրվարի 18-ին մայրաքաղաքի մշակույթի և երիտասարդության պալատում նրանք մասնակցեցին նաև Ա. Մկրտչյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ցուցահանդեսին և հուշ-երեկոյին: Ցուցահանդեսում ամփոփված էին նրա կարճատև կյանքի խոսուն վկաները՝ լուսանկարներ, ալբոմներ, աշակերտական տետրեր, որոնք վայելչագրության նմուշներ կարելի է համարել, դպրոցական պայուսակը, անձնական օգտագործման իրեր՝ ձեռքի ժամացույց, գրիչներ, ակնոցներ, ձեռքի խոշորացույց... Նաև... ապրած և չապրած տարիների վաստակած միակ մեդալը՝ «Մայրական երախտագիտություն»...

Հուշ-երեկոյին ելույթ ունեցան Ա. Մկրտչյանի հարազատներն ու ընկերները, ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչները, որոնց խոսքն ու հուշերն ընդմիջվում էին հայրենասիրական երգերով ու պարային բեմադրություններով: Հանդիսավար Նարե Նիկողոսյանն անդրադարձավ բյուրեղյա մաքրության տեր քաղաքական գործչի անցած ուղուն՝ ընդգծելով, որ եթե չընդհատվեր նրա կյանքը, «նա կլիներ նույն հայրենասերը՝ կիրթ, զարգացած, մարդկանց գաղափարի ու իր շուրջը համախմբելու նախանձելի կարողությամբ, լավ ղեկավարի ունակություններով ի վերուստ օժտված, Արցախյան շարժման ազատամարտիկ, հասարակության սերն ու հարգանքը վայելող Արթուր Մկրտչյանը»:

Նա ծնվել է 1959 թվականին Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղում, Ասլան և Լուսիկ Մկրտչյանների ընտանիքում: 1976-ին ավարտելով գյուղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագիտության բաժինը, որն ավարտելուց հետո ուսումը շարունակել է Մոսկվայի Միկլուխո Մակլայի անվան ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1981-83թթ. աշխատել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում: 1986-ին տեղափոխվել է ծննդավայր և աշխատել որպես Հադրութի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն (այսօր թանգարանը նրա անունն է կրում): 1988-ին պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել պ.գ.թ. աստիճան:

Դեռևս դպրոցում սովորելու տարիներին Արթուր Մկրտչյանն ընտրեց պատմաբանի մասնագիտությունը, և դրանում մեծ դեր է ունեցել պատմության նրա ուսուցիչը՝ Միքայել Խաչիյանը: Վերջինիս խոսքով՝ իր սանի մասնագիտության ընտրության հիմքում հայրենասիրությունն էր, որը նրա վեցերորդ զգայարանն էր և Շարժման տարիներին նրան հասցրեց մինչև խրամատ: Տակավին 6-րդ դասարանում պատմության դասագիրքը ծայրեծայր սերտած իր սանի մեջ ապագա գիտնականի հայտնությամբ ոգևորված ուսուցիչը վերհիշում է. «Նա երազում էր, որ պատերազմը շուտ ավարտվի, անկախություն նվաճենք, հրաժեշտ տանք այն արդարությանը, որով մինչև հիմա ապրել ենք և ապրենք ոնց խրամատում՝ իրար հետ կիսելով հացի պատառն ու ջրի մի կումը»: Հայրենասիրություն, բարոյականություն, իրավագիտություն. ըստ ուսուցչի՝ սրանք էին Ա. Մկրտչյան քաղաքական գործչի հիմնասյուները:

Քրոջ՝ Ալվարդ Մկրտչյանին հուշերը տարան 1976 թվականի օգոստոսյան այն օրերը, երբ գյուղական դպրոցի շրջանավարտ եղբայրը մեկնել էր Երևան և, գերազանցությամբ հանձնելով բոլոր քննությունները, ընդունվել պետական համալսարան: Նրա հուշերում հառնում է մի պատանի՝ նրբանկատ և ուժեղ կամքով, դեռ մանկուց՝ յուրահատուկ, բոլորից տարբերվող, հարազատների հանդեպ ուշադրությամբ ու սիրով լեցուն, «որը երբեք տրորված ճանապարհով չգնաց, բացեց իր սեփական արահետը ու այդպես էլ ապրեց... հավերժ: Խոնարհվենք Արթուրի և մեր բոլոր լույս-տղաների հիշատակի առաջ և հավատանք, որ նրանց լուսավոր հոգիները կամար են կապել Արցախի երկնակամարում, և նրանց հայացքի ներքո մենք իրավունք չունենք սխալ ապրելու: Մենք չվճարած պարտք ունենք նրանց և մեզնից յուրաքանչյուրի սրբազան պարտքն է պահել, պաշտպանել ու շենացնել այս սրբազան հողը»:

Դեռ ասպիրանտուրայում սովորելու տարիներին Ա. Մկրտչյանը ծանոթացել էր ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու Հրանուշ Խառատյանի հետ: Նա նույնպես ներկա էր հուշցերեկույթին և իր տարակուսանքը հայտնեց, որ բոլորը խոսում են Արցախում Ա. Մկրտչյանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվելու ոգևորության, նրա հետ կապված հույսերի, ծրագրերի, նրա ոգեղեն կերպարի մասին,

բայց «շիտակ լեզվով ու հստակ բառով չենք խոսում այն մասին, թե ինչ եղավ այդ նախագահի հետ... Ընտրում ենք բառեր՝ փախչելու իրականությունից, ինքներս մեզ վախենում ենք խոստովանել և օգտագործում ենք իբրև դրանց համարժեքները, որը կեղծում է մեր կյանքը: Եվ ես պարտք ունեմ, որովհետև, ինձ թույլ տվեք այստեղից ասել՝ ինձ համար Արթուրի առեղծվածային սպանությանը հաջորդած օրերին ես նույնպես նույնկերպ փախել եմ ու հաշտվել այն իրականության հետ, որ Արթուրի մահը, որին ես զոհ եմ համարում, և շատերն են զոհ համարում, պատշաճ ձևով չենք իմաստավորել և նաև ա՛յդ պատճառով ունենք այլ իրականություն, քան մենք կարող էինք, կամ պատկերացնում էինք կամ կուզենայինք ունենալ»: Ազգագրագետ-պատմաբանն իր ելույթում հետաքրքիր դիտարկումներ արեց ղարաբաղյան խնդրի վերաբերյալ՝ նշելով, որ երբ այն հասունանում էր, Արթուրի և երիտասարդ այլ պատմաբանների հետ քննարկումներում պարզվում էր «մեր «բոբիկ» լինելը, խորհրդային իշխանությունները մեզ հնարավորություն և իրավունք չէին տվել Ղարաբաղի խնդիրը մանրակրկիտ հետազոտել, հասկանալ: Մենք մտանք ղարաբաղյան խնդրի մեջ՝ առանց պատրաստ լինելու պատմական, իրավական վերլուծությունների»: Հ. Խառատյանը վերհիշեց, թե ինչ բախտի արժանացավ Ղարաբաղի մասին Մարիետա Շահինյանի գիրքը միայն այն բանի համար, որ այնտեղ նա գրել էր՝ «իմ սիրելի, բազմաչարչար Ղարաբաղ»: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի տխրահռչակ քարտուղար Մ. Բաղիրովն այդ գրքի հետքերով նամակ էր գրել Մոսկվա, և այն շրջանառությունից հանվեց, ողջ տպաքանակը հավաքվեց, իսկ Մ. Շահինյանին հարկադրեցին Բաղիրովին ներողության տեքստով նամակ գրել: Այդ հիմա՛ են հասանելի Հայաստանի արխիվում պահպանված նյութերը, իսկ Արթուրի ժամանակ իրադրությունը բոլորովին այլ էր. «Երբ Արթուրը եկավ Մոսկվա, և այն թեման, որ վերցրեց հետազոտության համար, դա արդեն քաղաքական ակտ էր և քաղաքացիական խիզախություն, որովհետև Մոսկվայի ազգագրության ինստիտուտը, ինչպես և ցանկացած կայսերական երկրի ազգագրություն, մարդաբանություն, ծառայում էր այդ երկրի քաղաքական շահերին: Անհնարին էր ազգային խնդիրներին վերաբերող հիմնահարցերը ներկայացնել գիտական մակարդակով: Մենք ղարաբաղյան խնդրի մեջ մտանք՝ չիմանալով դրա լուծման, նույնիսկ հարցադրման պատմական, իրավական հիմքերը: Այսօր էլ նույնիսկ ես շարունակում եմ հայտնաբերել տարբեր հեռագրեր Օրջոնիկիձեի, Միկոյանի, Ստալինի միջև, թե ղարաբաղյան խնդիրն իրենց պատկերացմամբ ինչպես պետք է լուծվի»: Բանախոսն ընդգծեց, որ Արթուր Մկրտչյանի համար անչափ դժվար էր ընտրած թեմայով աշխատել, քանի որ խորհրդային արխիվները փակ էին շատ հարցերում, միայն շատ չնչին և հաճախ կեղծված ամփոփումներ կարելի էր անել: Իր խոնարհումը հայտնելով կրտսեր գիտական ընկերոջ արդարության և քաղաքական կերպարի առաջ՝ նա ուրույն եզրահանգում արեց. «Ես հիմա արդեն խորապես վստահ եմ՝ եթե այդ դեպքը չլիներ, միևնույն է, Արթուրը զոհ էր լինելու: Նա արդարության ու քաղաքականության վերաբերյալ բոլորովին ուրիշ հայացք ուներ, որը շատ տարբեր է այսօր ընդունված հասկացությունից՝ առկա ռեսուրսների բաշխման և քաղաքական ուժերի վերադասավորության առումով: Նա չէր կարող այդպիսի քաղաքականության մեջ լինել, բայց եթե Արթուրի քաղաքական ուղին լիներ, մենք այսօր բոլորովին այլ հանգրվանում կլինեինք»:

Կնոջ՝ Գոհար Մկրտչյանի հուշերում ամբողջացավ աննկուն մարտիկի և անձնազոհ հայրենասերի կերպարը. «1991թ. մայիսին, երբ օմօնականները մի գիշերվա ընթացքում հայաթափ էին արել Հադրութի 16 գյուղերը, հադրուցի մի քանի երիտասարդներ, ընդամենը 6-7 հոգով, վերցրին որսորդական հրացանները և գնացին նրանց դեմ, որպեսզի թույլ չտան նրանց մտնել Հադրութ: Մի քանի օրից, երբ Արթուրը թրջված, հոգնած, սոված, եկավ տուն, որպեսզի զգեստափոխվի, նորից վերադառնա, մայրը՝ տ. Լուսիկն ասաց. «Ա հարքնը, էս խոխիս հի՞նչ օրըս քցալ: Պա ես 40 տարեկանումս խոխա ըմ պերալ, 20 տարի կըրթըցրալ, վեր մհենգ թվանգը ճիտը քցած ծըմըկներո՞ւմը կենա»: Հարսն ասաց, որ ինքը չի կարողանում համոզել, եթե մայրը կարող է՝ թող փորձի: Այդ ժամանակ որդին մորը հիշեցրել է, թե ինչ հպարտությամբ էր նա պատմում Մեծ Հայրենականի տարիներին Մոնղոլիայի կռվին իր մասնակցության մասին և հավելել. «Դու՝ ուր, մոնղոլն՝ ուր... Բա ես՝ 30 տարեկան երիտասարդս, իմ ազգի համար կռվելու իրավունք չունե՞մ»: Այս փոքրիկ դրվագն այնքան բնութագրական է, որ օրինակ կարող է ծառայել ներկա և գալիք սերունդների դաստիարակության համար:

Անչափ հուզիչ էր Արթուր Մկրտչյանի եղբոր խոսքը. «Ես ուզում եմ, որ հրաշք լիներ, ու այսօր ես քայլերս ուղղեի ոչ թե այստեղ, այլ քայլեի դեպի Արթուրի բնակարանը և նրա տան շեմին գրկեի նրան, համբուրեի իմաստնությունից արդեն ճերմակող նրա քունքերը ու շնորհավորեի նրա պանծալի 60-ամյակը: Ավաղ, նա ընդմիշտ մնաց 33 տարեկան»: Նա հատկանշեց ազատամարտիկ, գիտնական, քաղաքական գործիչ Արթուր Մկրտչյանի տեսակը, որն իր կարճատև կյանքն ապրեց ոչ թե մխալով, այլ բոցավառվեց՝ լույս ու ջերմություն նվիրելով իր շրջապատին:

ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ, պատգամավոր Դավիթ Իշխանյանը մեր նորօրյա ազատագրական պայքարի ծնունդ Ա. Մկրտչյանին բնութագրեց որպես Արցախի Հանրապետության պետականության կերտողի խորհրդանիշ, մեր անկախ հանրապետության առաջին նախագահ. «Լինելով ՀՅԴ անդամ, ընտրվելով ԳԽ նախագահ՝ գերադասեց պետական ամենաբարձր ամբիոնից հայտարարել, որ ինքը որևէ կուսակցության անդամ չէ, որպեսզի դառնա բոլորի նախագահը»: Պատգամավորի խոսքով՝ գերագույն գլխավոր հրամանատար հանդիսանալով հանդերձ՝ գերադասեց իր ուսերին չկրել զինվորական կոչումներ, ոչ էլ զինվորական համազգեստը դարձրեց ժամանակներին մոդայիկ դարձած հագուկապ: Առայսօր չարժանանալով պետական բարձր պարգևների ու կոչումների՝ նա արժանացավ ավելիին՝ ազնիվ ու պետական մտածելակերպով առաջնորդի կոչումին»:

Աժ նախագահ Աշոտ Ղուլյանը փետրվարյան զարթոնքի հորձանուտում Ա. Մկրտչյանի հայտնվելը այնքան բնական ու հասկանալի համարեց, ասես նրա մինչ այդ ապրած կյանքը մի տեսակ նախապատրաստություն էր մեր ազգային-ազատագրական պայքարի համար: «Չնայած երիտասարդ տարիքին՝ նա առանձնացավ իր պետական մտածողությամբ ու թեև պաշտոնավարեց շատ կարճ և կյանքից հեռացավ վաղաժամ, բայց ժամանակակիցների և սերունդների հիշողության մեջ մնաց որպես առաջնորդ, ում համար պետական շահն առաջնային էր ամեն ինչից և ով քաղաքականության մեջ պահպանեց մարդկային ու բարոյական դիմագիծը: Նրա քաղաքական կենսագրությունը լավագույն օրինակն է հանրահայտ խոսքի, որ ոչինչ հավերժական չէ, իսկ պաշտոնը զուտ միջոց է՝ ծառայելու ժողովրդին»: Աժ խոսնակն ամփոփելով իր խոսքը՝ շեշտեց, որ Ա. Մկրտչյանն անբաժան մասը կմնա իր երազած երկրի պատմության, իսկ գալիք սերունդների համար կմնա իբրև պետական ու քաղաքական գործչի ընդօրինակելի կերպար:

Ելույթ ունեցան նաև Ա. Մկրտչյանի ընկերները՝ Գագիկ Ավանեսյանը և Լևոն Հայրիյանը. Նրանց միավորել է արցախյան ազգային-ազատագրական շարժումը՝ սկսած նախապատրաստական փուլից՝ ստորագրահավաքներ, ցույցեր, միտինգներ՝ մինչև զինված պայքարի շրջան: Ոչ միայն գաղափարակից ընկերներ էին, այլև գաղափարի մարտիկներ: Համախմբվելով Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի գաղափարի շուրջ՝ նրանք իրենց պայքարը ավարտված չեն համարում և պատրաստ են այն շարունակել մինչև հաղթական ավարտ:

Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ

ԱՄԵՆՔԻ ՀԵՏ ԱՊՐՈՒՄ ԵՄ...

ԼԵԶՈՒՆ՝ ԱԶԳԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Մայրենիի միամսյակի կապակցությամբ մեր հարցազրույցը ԱՀ ԿԳՍՆ լեզվի տեսչության պետ Արտակ ՂՈՒԼՅԱՆԻ հետ:

-Պարոն Ղուլյան, հայոց լեզուն մեր սրբություն սրբոցն է, մեր պետականության գոյատևման երաշխիքը: Ինչպե՞ս կորակեիք մայրենի լեզվի անաղարտության վիճակը մեր հանրապետությունում:

- Եթե լեզուն ընդունված է համարել հասարակության հաղորդակցման հիմնական և կարևորագույն միջոց, ապա հայերիս համար այն առաջին հերթին եղել է որպես ինքնության պահպանման գործոն: Հայոց լեզուն հայ ազգի հոգեբանությունն է, հայ ցեղի առասպելական պատմությունն ու բազմադարյա հարուստ մշակույթը: Սակայն ազգային հոգեբանությունը, դարավոր հարուստ մշակույթը անհրաժեշտ է հավուր պատշաճի մատուցել հատկապես մատաղ սերնդին: Այս համատեքստում տեղին է հիշել լեզվաբան Դավիթ Գյուրջինյանի միտքը՝ այսօր դպրոցներում խոսք սովորեցնելու փոխարեն մենք երեխաներին միայն լեզվաբանական գիտելիքներ ենք հաղորդում: Ավելի ուշ նույն բանը համալսարան ընդունվող դիմորդից ենք պահանջում. մեռած բառապաշար, ինչ-ինչ սահմանումների ճշգրտություն և այլն: Սա լուրջ խնդիր է: Իսկապես, մեր մայրենի լեզվի արդյունավետ դասավանդման մասին դեռ վաղ է խոսել: Խնդիրն, իհարկե, այսօր չի առաջացել, այն իր լուծմանն է սպասում շատ վաղուց: Մեր մեծերից շատերին է այն մտահոգել: Նաև Հովհաննես Թումանյանն է իր «Հայերեն չգիտեն» հոդվածում գրել. «Ազգիս սերուցքը պիտի ուսումնասիրեր հայերենը, հայերենագիտությունը մեզ համար պիտի լիներ «գիտությունների գիտություն», լավագույն գլուխները պիտի դասավանդեին դպրոցում և բուհում, մինչդեռ... տասնամյակներ շարունակ միջնակարգ դպրոցի ամենատկար շրջանավարտները (չնչին բացառությամբ) դառնում էին հայերենի ուսուցիչ»: Բարեբախտաբար Արցախի կրթօջախներում պատահական հայտնված ուսուցիչների կողքին առկա է նաև հայոց լեզվի և գրականության արհեստավարժ ուսուցիչների հսկա բանակ: Եվ պետք է խոստովանենք, որ վերջիններս արժանապատվորեն իրականացնում են հայապահպանման առաքելությունը: Բայց խնդիրը միայն այս տեսանկյունից դիտելը սխալ է: Դպրոցներում արդի ծրագրերն ու դասագրքերը ժամանակի փորձությանը չեն դիմանում: Համակարգային բարեփոխումներ են անհրաժեշտ: Պետք է այնպես անել, որ հայոց լեզուն մեր երեխաների համար գրավիչ դառնա, լինի հետաքրքիր ու սիրելի: Հայ աշակերտը չպետք է անտարբեր լինի ոսկեղենիկ մայրենիի նկատմամբ, նա հայոց լեզվով պետք է մտածի, հայոց լեզվով ապրի, քանի որ պետք է գիտակցի, որ առանց լեզվի դատապարտված է վերացման: Ինչ վերաբերում է որակումներին, այստեղ անելիքները բավականին շատ են:

- Հայոց լեզուն աղավաղվում է ոչ միայն հանրության շրջանում, այլև պետական տարբեր համակարգերում ու լրատվական դաշտում: Ի՞նչ քայլեր է ձեռնարկում տեսչությունը հայոց լեզվի անաղարտության պահպանման ուղղությամբ:

- Արդեն ավելի քան տասը տարի ԿԳՍՆ լեզվի տեսչությունը հունվարի 21-ից փետրվարի 21-ը հայտարարում է Մայրենիի միամսյակ: Հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում Մայրենիի օրվան նախապատրաստվում են յուրովի: Բնականաբար բոլոր միջոցառումներին լեզվի տեսուչները չեն կարող մասնակցել, սակայն փորձում ենք հնարավորինս շատ միջոցառումների ներկա լինել: Դպրոցների մի մասն էլ նկարահանում է միջոցառումը և ուղարկում լեզվի տեսչություն, որտեղ սահմանված ժամկետում ամփոփում ենք արդյունքները, լավագույններին պարգևատրում նվերներով ու պատվոգրերով: Ուրախալի է, որ Մայրենիի օրը վերածվում է համընդհանուր տոնակատարության: «Մայրենին և մենք» թեմայով դասախոսություններով լեզվի տեսուչները պարբերաբար հանդես են գալիս պետական հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների առջև: Հանդիպումների ընթացքում պարզաբանվում են լեզվական խնդիրների կանոնարկումն ապահովող նորմատիվ փաստաթղթերը, հայոց լեզվի ծագմանն ու զարգացմանը վերաբերող հարցեր, հայերեն բառերի ու դարձվածների ճիշտ գործածության, ուղղախոսության և ուղղագրության հետ կապված խնդիրներ: Մանրամասնվում են նաև գործնական գրությունները ճիշտ ձևակերպելու եղանակները: Լեզվի տեսչությունում անհատական հանդիպումներ ենք կազմակերպում մեր ոչ հայախոս հայրենակիցների հետ, նրանց սովորեցնում հայերեն գրել և խոսել: Միաժամանակ հետևում ենք տպագիր մամուլում և ռադիոհեռուստատեսային խոսքում լեզվի անաղարտության պահպանմանը: Ըստ էության, մամուլում աղաղակող թերություններ չենք արձանագրել: Լրագրողներն ըստ ամենայնի տիրապետում են գրական հայերենին: Հիմնական խախտումները կատարում է Արցախի հանրային հեռուստառադիոընկերությունը: Եվ «Լեզվի մասին» և «Հեռուստատեսության ու ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներում հստակ գրված է, որ եթերի լեզուն հայերենն է: Սակայն հեռուստատեսության եթերում երբեմն կարող ենք տեսնել լրագրողի հարցերին ռուսերեն պատասխանող հյուրի, ցուցադրվում են ռուսերեն ֆիլմեր և այլն: Պատասխանատուները խոստացել են կարճ ժամկետում վերացնել թերությունները:

- Այսօր մեր շրջապատը հեղեղված է օտարալեզու ցուցանակներով, գովազդային վահանակներով, այդ թվում՝ հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվող հաղորդումներն ու գովազդները: Ըստ Ձեզ, ի՞նչն է ստիպում մարդկանց տրվել օտարամոլությանը: Արդյո՞ք հնարավոր չէ զերծ մնալ դրանից:

- Երևի մի քիչ չափազանցված է «հեղեղված» բառը, քանի որ հանրապետությունում միայն օտարագիր ցուցանակ կամ գովազդային վահանակ հազվադեպ կարելի է տեսնել, որոնք էլ հիմնականում տնտեսվարող սուբյեկտի՝ օրենքի չիմացության հետևանք են: Պատասխանատուներին զգուշացրել ենք, և սահմանված ժամկետում նրանք կշտկեն թերությունները: Ինչ վերաբերում է օտարամոլությանը, կարծում եմ՝ սա դարերով պետականություն չունենալու հետևանք է: Բայց դա արդարացում չունի: 30-ամյա անկախության շրջանում ինչպե՞ս կարելի է հասկանալ մեր այն հայրենակիցներին, ովքեր նախընտրում են խոսել օտար լեզվով, նախապատվությունը տալ օտար բառերին: Հիրավի, դա երկար դարեր պետականություն չունենալու հետևանք է, պետության գաղափարն արժանվույնս չընկալելու, և որքան էլ վիրավորական հնչի՝ ստրկամտության վկայություն: Եվ ոչ միայն: Դրան նպաստում է նաև այն հանգամանքը, որ Հայաստանում անկախությունից հետո նկատվեց նահանջ գրական հայերենից, մինչդեռ պետք է հակառակը լիներ: Չգիտես որտեղից ձևավորվեց մի նոր աշխարհաբար, որը կամաց-կամաց իր հաստատուն տեղը գրավեց հասարակության շրջանում ու մտավ նաև եթերի լեզու: Հայաստանյան հեռուստատեսության սերիալների, գովազդի և բազմաթիվ ու բազմազան հաղորդումների լեզուն չի կարելի շփոթել գրական հայերենի հետ, դա ավելի շուտ երևանյան ժարգոնն է, որին չգիտես ինչպես է հաջողվում մուտք գործել նաև գրավոր լեզու՝ վտանգելով գրական հայերենի, հետևաբար և՝ մեր ինքնության հիմքերը: Մի խոսքով՝ լեզուն մեր հայրենիքն է, լեզուն մենք ենք, մեզանից յուրաքանչյուրը, ուրեմն չի կարելի անտարբեր լինել մայրենի լեզվի հանդեպ:

- Եթե համեմատեք վերջին տարիներին կատարած դիտարկումները՝ որակական առաջընթա՞ց, թե՞ հետընթաց է նկատվում, և ինչո՞վ է այն պայմանավորված:

- Միանշանակ՝ առաջընթաց: Նույնիսկ արցախյան բարբառում, եթե նկատել եք, օտար բազմաթիվ բառեր հետզհետե իրենց տեղը զիջում են գրական համարժեքներին, ինչը պայմանավորված է հասարակության առողջ մտածելակերպի տեր զանգվածի ակտիվ գործունեությամբ: Այսօր շատերն են գիտակցում, որ հայերենն է մեր անցյալի, մեր մշակույթի ու աշխարհի հետ հաղորդակցության գլխավոր բանալին: Այստեղ կցանկանայի մեջբերել հայերենապաշտ Հրանտ Մաթևոսյանի հանճարեղ միտքը. «Մեր լինելության, գոյության անժխտելի պայմանն է լեզուն: Աշխարհի քարտեզի վրա ու երկրի հսկա տարածքում գրված իրենց մի պստիկ տեղը, դարերի ճակատին գրած հայ ու Հայաստան անունը այս փոքրիկ հողն ու ժողովուրդը նվաճել են լեզվով: Լեզուն ապրելու ձև է, լեզուն աշխարհ է, սնունդ ու պայքարի միջոց, ինքնարտահայտման ու ինքնադրսևորման եղանակ»:

ԱՆՈՒՇ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ, ԳԵՂԵՑԻԿ ՀԱՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Ստեփանակերտի Ա. Ղուլյանի անվան հ. 2 հիմնական դպրոցում ներդպրոցական մակարդակով միջոցառումն անցկացվեց հետաքրքիր մտահղացմամբ: Կազմակերպիչ՝ հայոց լեզվի և գրականության մեթոդմիավորման նախագահ Կարինե Իշխանյանն ասաց, որ ամեն տարի փետրվարի 21-ին նշում են ավանդական դարձած Մայրենիի օրը, իսկ այս տարի որոշել են հետաքրքիր համադրություն ներկայացնել: Փետրվարի 19-ին լրացավ Հովհ. Թումանյանի 150 տարին, սեպտեմբերին մեծ շուքով կնշվի Կոմիտասի 150-ամյակը, և որոշել են երկու հայ հանճարների՝ Ամենայն հայոց բանաստեղծի և Ամենայն հայոց երգահանի հոբելյանները նշել միասին՝ նրանց հետ մեկտեղ՝ մեր ազգի պահապան, մեր անկողոպտելի գանձ Մայրենիի տոնը:

Այս համադրումը տեղին ու գեղեցիկ էր:

Գործողությունները միաժամանակ ընթանում էին բեմում և դահլիճում: Միջոցառումը գեղեցիկ երաժշտությամբ և աղջիկների հեզաճկուն պարով բացեցին դպրոցի շնորհաշատ աշակերտները: Ապա 3-րդ «բ» դասարանցիները բեմադրեցին Թումանյանի «Մի կոտ ոսկի» հեքիաթը: «Այայի երկիր Արցախ» ոգեշունչ երգի ներքո ութերորդցիները ցուցադրեցին գեղեցիկ պար:

Միջոցառումը վարող Կ. Իշխանյանը հայտարարեց 8-րդ «ա», 8-րդ «բ», 8-րդ «գ» դասարանների միջև մայրենիից վիկտորինան սկսելու մասին: «Շանթ», «Լույս», «Մաշտոցի սաներ» թիմերը ներկայացրին իրենց նշանաբանը՝ «Կպահպանենք ու կպաշտպանենք դարերից մեզ ավանդված մեր շքեղ մայրենին», «Շտեմարանը լցնենք գիտության լույսով», «Լեզուն է ազգի ամենախոշոր դրոշմը»: Թիմերի անդամներն արտասանեցին հայ և օտարերկրյա մեծերի ասույթները հայոց լեզվի մասին:

Խաղավարը թիմերին բաժանեց հարցերով թերթիկներ, որոնց տրված ժամկետում պետք է գրավոր պատասխանեին: Նա փոքրիկ հուշում արեց. պարտադիր չէ, որ բոլոր հարցերը լինեն ձևաբանության կամ շարահյուսության վերաբերյալ, դրանք նաև հումորիկ, տրամաբանական պատասխաններ ունեն: Այդ ողջ ընթացքում մինչ մասնակիցները մտածում էին հարցերի շուրջ, դահլիճում մեղմ հնչում էր Կոմիտասի երաժշտությունը:

Մինչ ժյուրիի անդամները կքննարկեին ու կամփոփեին առաջին փուլի արդյունքները, հայտարարվում է կարճ ընդմիջում, որի ընթացքում 8-րդ «ա» դասարանի սաները բեմից ներկայացնում են Կոմիտասի կենսագրությունը:

Ապա 8-րդ «բ»-ից Սոնա Արզումանյանը գեղեցիկ ձայնով կատարում է Կոմիտասի «Սոնա յար» և «Սարերի հովին մեռնեմ» երգերը: Հերթական կատարումը Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի նախերգանքն է՝ «Հազար ութ հարյուր վաթսունինը թվին հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին...»՝ հայոց երկու հանճարներին բնութագրող հատվածը: Թիմերը երկրորդ փուլին էին անցել, իսկ բեմում Կոմիտասից անցում էր կատարվել Թումանյանին: Աշակերտներից մեկը ներկայացնում է Մեծ Լոռեցու կենսագրությունը, մյուսներն արտասանում են մեծերի խոսքը նրա մասին, ապա՝ գրողի բանաստեղծությունները, քառյակները: Փոքրիկ երգիչ Դավթի համար օրն այնքան տոնական էր, որ բեմում ելույթ ունենալու համար պատրաստվել էր արհեստավարժ երգչին հատուկ բեմական կեցվածքով: Նա քաղցր ձայնով կատարեց Թումանյանի խոսքով և Կոմիտասի երաժշտությամբ «Կաքավիկ» գեղեցիկ երգը:

Այդ ընթացքում ժյուրին արդեն ամփոփել էր վիկտորինայի արդյունքները: Թիմերի ուժերը գրեթե հավասար էին. միավորների տարբերությունը շատ քիչ էր: Խաղավար Կ. Իշխանյանը գովեց մասնակիցներին, բայց մրցույթը մնում է մրցույթ, և «Լույս» թիմը հայտարարվեց առաջին տեղում: Դպրոցի փոխտնօրեն Կարինե կողմից հանձնեց համապատասխան պատվոգրեր:

Վեցերորդցիների կողմից կատարված «Կարնո Քոչարի»-ով եզրափակվեց միջոցառումը:

Ս. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀՈՒՐ ԵՄ ԴԱՌԵԼ, ԼՈՒՅՍ ՏՎԵԼ

ՖԻԶՄԱԹՑԻՆԵՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱՊԱՏՈՒՄԸ

Թումանյանն այն գրողն է, որին կարող ես ամեն օր կարդալ ու ոչ միայն չհոգնել, այլև ամեն անգամ նորովի ընկալել, ամեն օր նրան նվիրված միջոցառում նայել ու նորովի բացահայտել... Տիեզերական մեծություն, որում ինչքան խորանում, այնքան նորանոր շերտեր են բացվում: Գրող, որի 150-ամյակն ենք նշում ազգովի` մեծով ու փոքրով, որը յուրաքանչյուրիս հետ է վաղ մանկությունից մինչև խոր ծերություն:

Թումանյանի հոբելյանով Դսեղի հիասքանչ գույները, Լոռվա հեքիաթային աշխարհի բույրերն են տարածվել ամենուր, վեհ ու վսեմ լեռների, խոր ձորերի արձագանքներն են լսվում բոլորի սրտում:

Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցում ևս մեկ անգամ սուզվեցինք հիասքանչ թումանյանական աշխարհ: 8-րդ «ա» դասարանի աշակերտների` հայոց լեզվի և գրականության իրենց ուսուցչուհի Սուսաննա Մկրտչյանի հետ ցուցադրած դաս-միջոցառումն ամբողջովին գրողի կյանքի արտացոլումն էր: Գործող անձինք իրենք էին` Թումանյանը, նրա հերոսները տիպական միջավայրում: «Մեր գյուղն էն է, որ հըպարտ,// Լեռների մեջ միգապատ,// Խոր ձորերի քարափին,// Ձեռը դըրած ճակատին,// Միտք է անում տըխրադեմ,// Ի՞նչ է ուզում, չըգիտեմ...» («Մարո»): Ահա այս վեհ ու վսեմ լեռների գրկում է ծնվել Ամենայն հայոց բանաստեղծը: Ամբողջ միջոցառումն անցավ այս ոգով: Ներկայացվեց Թումանյանի կենսագրությունը` համեմված նրա ստեղծագործություններով, ինչը տեսանելի դարձրեց և՛ այդ ստեղծագործությունների ատաղձը, և՛ գրողի անցած ուղին: Ունկնդիրը պարզ տեսավ գրողի կյանքի բոլոր փուլերը` ստեղծագործական տվայտանքներով, ինչն անմոռաց են դարձնում այդ տողերն ու դրանք ստեղծած հեղինակին: Թումանյանը պատմում է, որ իրենց տոհմը եղել է Լոռվա հին ազնվականական տոհմերից մեկը, որն ունեցել է բազում ավանդություններ. «Ես ծնողներիս առաջնեկն եմ եղել, չափազանց լացկան ու անհանգիստ: Մայրս պատմում է, որ իր ձեռքի վրա եմ մեծացել, ո՛չ օրորոց են դրել, ո՛չ էլ ճոճքի մեջ, որ միտքս պայծառ մնա, չօրորվի...»: Հեղինակի «Ինքնակենսագրություն»-ը աշակերտները շարունակելով` պատմեցին, որ տատերը շատ են սիրել իրենց թոռանը, հատկապես` հորական տատը: Նա շատ կիրթ կին էր, անձամբ էր հետևում թոռան կրթությանը, հագնվելուն, շարժումներին` պահանջելով, որ ամեն ինչ պարզ ու մաքուր և շիտակ լինի, ու թոռան անունն էլ դրել է ամուսնու` Օհանես աղայի անունով, ու բոլորը Թումանյանին Օհանես աղա էին ասում: «Իմ հայրը` տեր-Թադևոսը, նույն գյուղի քահանան էր: Ամենալավ ու ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ իմ կյանքում, այդ եղել է իմ հայրը: Նա ազնիվ մարդ էր, ազնվական` բառի բովանդակ մտքով: Չափազանց առատաձեռն էր

ու մարդասեր, առակախոս ու զվարճաբան: Անդունդի խորության տեր մի մարդ, որն ուներ մի խոր լռություն: Նա թեև քահանա, նշանավոր հրացանաձիգ էր և ձի նստող»,- պատմում է գրողը:

Թումանյանի կյանքում շատ մեծ է եղել ծնողների դերը: «Մեծ բախտ է լավ ծնողներ ունենալը, հատկապես` լավ մայր»,- ասում է Թումանյանը: Ամենաբարձր տեղերում, ժայռոտ տեղերում, կանաչների մեջ է մեծացրել իր որդուն. «Իմ կընունքին երկինքը` ժամ, արևը` ջահ սըրբազան, //Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերըն` ավազան. // Սարը եղավ կընքահայրս, ցողը` մեռոն կենսավետ, // Ու կընքողս Նա ինքը եղավ, որ սահմանեց ինձ պոետ» (քառյակ): Գրողը խոստովանում է, որ ամենալավ ու քաղցր օրերը սարերում է անցկացրել. «Ոչ ուսումնարան կար, ոչ դաս, ոչ դաստիարակություն: Ազատ էինք միանգամայն ու խաղում էինք: Որքան էինք խաղում ու ոնց էինք իրար սիրում, ոնց էինք սովորել իրար: Իսկ սոված ժամանակներս էլ վազում էինք հացի տաշտից մի կտոր հաց առնում, պանրի կարասից մի կտոր պանիր ու էլի շտապով վազում իրար մոտ» («Իմ ընկեր Նեսոն»):

Տըկլոր, աշխույժ խըմբակով,
Աղաղակով, աղմուկով,
Խաղում էինք, վազվըզում
Գույն-գույն մանրիկ ավազում:
(«Մարո»)

Աղջիկները երգում են` «Ա՜խ ինչ լավ են սարի վրա// Անցնում օրերն անուշ-անուշ//, Անրջային, թեթևասահ//, Ամպ ու հովեր անուշ-անուշ/...

Պատանի Թումանյանին այնուհետև տեսնում ենք Ջալալօղլու դպրոցում, որտեղ էլ` նրա առաջին սիրո չափածո արգասիքը («Հոգուս հատոր, սըրտիս կըտոր»), ապա նրա թիֆլիսյան ուսումնառությունը Ներսիսյան դպրոցում, ամուսնությունը, բազմանդամ ընտանիքը, հասուն շրջանի ստեղծագործությունները, «Վերնատուն»-ը, հայրենիքի ցավը... Չկա մի ստեղծագործություն, որ մտացածին լինի: Ամենը իրականության ռեալիստական արտացոլումն է` անցկացված գրողի սրտի միջով:

Լսում ենք քաղաքից եկած հեղինակի զրույցը «Հառաչանք»-ի ծերունու հետ («Ու նըստոտեցինք իրար դեմ ու դեմ // Սաստկությամբ վառվող կրակի շուրջը, // Մեր առջև ձորն էր թշշում խավարչտին,// Մեր դեմը (ելնում) խաղում ձորերի շունչը...), վիթխարի ընկուզենու տակ քեֆ անող պապերի մշտամնա փիլիսոփայությունը` ապրե՛ք, երեխեք, բայց մեզ պես չապրեք..., տեսնում Մարոյի ողբերգությունը:

Նա կարողացել է իր գործերում ներկայացնել հայ ժողովրդի վիշտը, կենցաղը, դարերի ընթացքում ձեռք բերած ավանդույթներն ու սովորությունները: Դա առավել լայնհունությամբ երևում է «Անուշ» պոեմում: Աշակերտները ներկայացրին հատվածներ համանուն օպերայից` («Ամպի տակից», «Համբարձում յայլա», «Ասում են ուռին»), կոխի տեսարանը: Կյանքի անցողիկության, լավ գործով անմահ մնալու գաղափարախոսությունը ներկայացրին «Թմկաբերդի առումը» պոեմով:

Թումանյանն այրվել է իր ժողովրդի ճակատագրով: Նա զօր ու գիշեր էջմիածնի պատերի տակ կուչ եկած Ցեղասպանության որբերի կողքին էր: Նրա վիշտն անհուն ծով էր... Ու մեկը մյուսի ետևից աշակերտներն արտասանում են «Հայոց վիշտը», «Հայոց լեռներում», «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունները:

Թումանյանը նախ և առաջ ազգային բանաստեղծ է, ու այդ առիթով ասել է. «Բոլորը հաստատ միայն մի բան գիտեն, որ ունեն մի թշվառ հայրենիք, բայց թե ինչ բան է այդ հայրենիքը, ինչի մեջ է նրա թշվառությունը, ինչպես են ապրում, ինչպես են լալիս, ինչպես է խնդում, ուրախանում այդ ժողովուրդը. ահա այդ է հարկավոր, նրանց այդ առավելությունը, այդ հատկությունը միայն կարող է ձեռնադրել նրանց հայոց բանաստեղծ: Հակառակ դեպքում նրանք կմնան հայ բանաստեղծներ և ոչ թե հայոց բանաստեղծներ»: Եվ նա՛ դարձավ այդ բանաստեղծը` Ամենայն հայոց բանաստեղծը: Նա՛ դարձավ հայ ժողովրդի ազնիվ կենսագիրը:

Դաս-միջոցառմանը երեխաներն անդրադարձան նաև Թումանյանի թարգմանական ստեղծագործություններին: Արտասանեցին «Ձմեռվա իրիկունը» բանաստեղծությունը և դրա ռուսերեն բնագիրը: Բանաստեղծի երկերում ասես հնչում է տիեզերական շարժման պատկերը, և ինքնաբնութագրող են նրա տողերը` «Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին...»:

Եվ հենց այդ տիեզերական տեղումների ծնունդ են նրա հասուն տարիքի գործերը` փոքրածավալ, բայց խորիմաստ քառյակները, որոնք նույնպես հնչեցին աշակերտների մատուցմամբ:

Թումանյանը մեր ամենամեծ մանկագիրն է: Նրա շատ բանաստեղծություններ երգերի են վերածվել: Աշակերտների կատարմամբ հնչեցին մի քանիսը:

Դաս-միջոցառումն ավարտվեց Թումանյանի հեքիաթների խառը բեմադրությամբ և յուրատիպ մեկնաբանությամբ:

Ֆիզմաթցիների թումանյանապատումը հաջողված էր: Դա յուրատեսակ սիմֆոնիա էր` արվեստի տարբեր ճյուղերի (պատում, ասմունք, երգ, պար, երաժշտություն, թատերական բեմադրություն, ազգային տարազ, կենցաղ, խաղեր, ավանդություններ, սովորություններ) համադրումով, ինչից մեծ բավականություն ստացավ հանդիսատեսը` ուսուցիչներ, աշակերտներ, ծնողներ, հյուրեր:

Ծնողական կոմիտեի նախագահը, շնորհակալություն հայտնելով միջոցառման անմիջական կազմակերպիչ Սուսաննա Մկրտչյանին, դասղեկին, տնօրինությանը, օրվա խորհրդին հավատարիմ` ջերմ մակագրությամբ դպրոցին նվիրեց Թումանյանի երկերը` աշակերտներին խորհուրդ տալով սիրել գիրքը` գիտելիքների աղբյուրը, քանի որ գիտելիքն է այն հզոր ուժը, որ մեզ հավերժ անպարտ ու հպարտ է պահում:

Իր հերթին դպրոցի տնօրեն Սուսաննա Ներսեսյանը բարձր գնահատեց միջոցառումը, որը ներկաներին տեղափոխեց Մեծ Լոռեցու աշխարհը, նշեց, որ այն ունի հայրենասիրական և դաստիարակչական մեծ նշանակություն: Բարու, լավի մասին ասվածը լոկ խոսքեր չպետք է լինեն, դրանք պետք է կարողանալ իրագործել կյանքում:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՆԱԵՎ ՄԵԾ ԳՐՔԱՍԵՐ ԷՐ

«Կա Մեծարենց, կա Տերյան, և բազում այլ պոետներ կան, բայց Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»:
Եղիշե Չարենց

Բերձորի քաղաքային գրադարանում փետրվարի 19-ին Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ կայացավ ցերեկույթ, որն ավարտվեց գրքերի նվիրումով: Գրադարանի տնօրեն Սոնյա Գևորգյանը ներկայացրեց հայ մեծ գրողին` որպես հանճարեղ մտավորական, մեծ գրքասեր, որն իր համար գիրքը համարել է համալսարան, ում համար լավ գրքերը փոխարինել են հեղինակներին: Նա հորդորեց աշակերտներին ավելի շատ ընթերցել, գիրքը գերադասել համակարգչից: Էկրանին երաժշտական հնչյունների ներքո ներկայացվեց Ամենայն հայոց բանաստեղծի կենսագրականը, ցուցադրվեցին լուսանկարներ: Ներկաներին իրենց ելույթներով ողջունեցին գրադարանի գրական ստուդիայի սաները: Նրանք ասմունքեցին հայ մեծերի մտքերը, ստեղծագործություններ` նվիրված Թումանյանին:

Չարենց ու Սևակ, այլ մեծեր, որոնք Թումանյանին համարում են հայ գրականության հսկան: Ներկայացրին Մեծ Լոռեցու խոսքը` նվիրված գրքին, ընթերցանությանը: Հնչեցին հատվածներ Թումանյանի գործերից, առավել կարևորվեց «Թմկաբերդի առումը» պոեմը, որտեղ խոսվում է գործի անմահության մասին: Թումանյանն անմահ է իր հանճարեղ գործերով, որոնցից յուրաքանչյուրն ունի համամարդկային հնչողություն. և՛ ազգային է, և՛ հայրենասիրական: Թումանյանի քառյակները դարեր շարունակ կուղեկցեն հայ ժողովրդին և միշտ կմնան արդիական: Թումանյանի համար շատ թանկ էր գիրքը, իր գրադարանում ուներ 8 հազարից ավելի գիրք և շատ է անհանգստացել յուրաքանչյուր գրքի համար: Շատ է սիրել երեխաներին, հավաքել է շուրջը, զրուցել նրանց հետ, գրքեր նվիրել:

«Ա՜խ, ինչ լավ է սարի վրա» երգի, «Ասում են` ուռին աղջիկ էր ինձ պես...» Ա. Տիգրանյանի երաժշտությամբ հատվածը «Անուշի»-ից կատարումով ներկաներին ողջունեց Լիլիթ Ավագյանը: Գրական ստուդիայի սաների ելույթից հետո գրադարանի աշխատողները գրքեր նվիրեցին ներկաներին: Կիմ Ղահրամանյանի «Արցախ. խեղաթյուրված և անտեսված հարցեր» գիրքն էլ ես նվեր ստացա: Վահան Թեքեյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի գրադարանավարը Բերձորի գրադարանին նվիրեց Երուանդ Ազատեանի «Ժամանակի և ժամանակակիցներու հետ» գիրքը:

Հանդեսին ներկա էր Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Մարինե Պետոյանը, որը գրադարանի անձնակազմին ու աշակերտներին շնորհակալություն հայտնեց միջոցառման համար:

Թումանյանին նվիրված ցերեկույթներ, հանդեսներ տեղի են անցկացվում շրջանի դպրոցներում:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԼՈՒՅՍ ՏԱԼՈՎ ԵՄ ՍՊԱՌՎԵԼ

ԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ



Թումանյանով՝ մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք: Տարազգի-տարալեզու գրականության մեծ աշխարհ մենք մտնում ենք Թումանյանով՝ և այդ աշխարհը այլևս մեր հայրենի եզերքն է:

Հրանտ Մաթևոսյան

2019-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ն հռչակել է Թումանյանական տարի, ասել է թե՝ Ամենայն հայոց բանաստեղծը սոսկ ազգային մեծություն չէ, այլև համամարդկային: Երիցս իրավացի էր նրա բանաստեղծ ընկերը՝ Ավ. Իսահակյանը, երբ գրում էր. «Մեր թռիչքը Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել», իսկ 20-րդ դարի մեր մյուս Մեծի՝ Ե. Չարենցի գնահատմամբ՝ «...Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»: Շատերն են հիացել նրա բանաստեղծական հանճարով. հայ ժողովրդի և գրականության մեծ բարեկամ Վ. Բրյուսովը, «անհաս ոլորտում» փայլատակող նրա «պայծառ լույսով սքանչացած», այսպիսի տողեր է ձոնել անզուգական բանաստեղծին. «Դու աստեղատուն հիմնեցիր նոր // Երկնակամարում քո հայկական»: Գոհարակերտ բարձունքներում մտքի խրախճանքներ վայելելու պատիվը նրան ի վերուստ է շնորհվել՝ «...Ու կընքողս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ»: Իր կարճատև ստեղծագործական կյանքում Թումանյանն Արարչի պես իր գրչի «առատ, անհատ» հունձքով անմահացավ, չնայած ինքնադժգոհությունը մշտապես ուղեկցում էր նրան. «Ի՞նչ եմ գրել մինչև հիմա - մի քանի տող բան, էն էլ վռազ, ոտի վրա»... Այդ «մի քանի տողը» համաշխարհային մտքի գանձարանում նա թողեց իբրև իր անմահության հավերժական վկայություն:

Որպես համաժողովրդական սիրո վառ վկայություն՝ մայրաքաղաքի կրթական ու մշակութային օջախներն այս օրերին ապրում ու շնչում են Թումանյանով: Հոբելյանական տարաբնույթ միջոցառումների շարքից սույն հոդվածում կանդրադառնանք Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոցի 12-րդ հումանիտար 2-րդ դասարանի նախաձեռնությամբ և հայոց լեզվի ու գրականության իրենց ուսուցչուհի և դասղեկ Մանուշ Բալայանի գլխավորությամբ կազմակերպված ցերեկույթ-մրցույթին: Սրահում թևածում էր թումանյանական շունչը. գեղեցիկ ձևավորված պաստառին բանաստեղծն էր՝ ընտանեկան և գրչակից ընկերների միջավայրում, հայ մշակույթի մեծերի հետ: Մրցավարի ջերմ խոսքը և միջոցառման մասնակիցների ասմունքը հաճելի տրամադրություն էին ստեղծել: Մրցույթին մասնակցում էին տասներորդցիների չորս թիմեր՝ «Հայոց լեռներում», «Խոջիվանք», «Վերնատուն», «Փարվանա»: Ուշագրավ է, որ վերջինիս կազմում հումանիտար տասներորդցիների հետ մրցելու հայտ էին ներկայացրել նաև բնագիտականի տասներորդցիները: Մրցավար Աննան ու մրցատյանի անդամները 12-րդ հումանիտար 2-րդ դասարանից էին: Մրցույթի մեկնարկից առաջ թիմերի ավագները միջոցառման մասնակիցներին ներկայացրին իրենց թիմերի կազմը և հիմնավորեցին ընտրած անվանումները:

Խաղ-մրցույթն անցկացվեց երկու փուլով, յուրաքանչյուր փուլում ընդգրկված էր 10 հարց: Դրանք իմացական, լեզվական և տրամաբանական համադրությամբ ընտրված հարցեր էին, որոնք կազմել էին տասներկուերորդցիները: Հարցերն առաջադրում էր մրցավարը, միաժամանակ դրանք հայտնվում էին համակարգչի էկրանին: Յուրաքանչյուր հարցի տրամադրվում էր մեկ րոպե, թիմերը պատասխանողը հանձնում էին գրավոր՝ առանձին թերթիկների վրա: Յուրաքանչյուր հինգ հարցից հետո թիմերից մեկը ներկայացնում էր մեծ քնարերգուից որևէ ստեղծագործություն: Ասմունքը հանձնարարվել էր որպես տնային առաջադրանք, բայց չէր գնահատվում: Արդյունքներն ամփոփվում էին ամեն փուլից հետո:

Հատկանշական է, որ մրցույթն առիթ էր աշակերտների համար ոչ միայն վերհիշելու իրենց գիտելիքները Թումանյանից, այլև պրպտումներ կատարելու և վերհանելու նորանոր էջեր ու դրվագներ բանաստեղծի կյանքից ու գործերից: Հետաքրքիր ու բովանդակալից հարցեր էին կազմել աշակերտները, որոնք բնութագրում էին Թումանյան մարդուն, ընտանիքի հորը, ընկերոջը, բանաստեղծին, հասարակական գործչին: Ներկայացնենք հարցերից մի քանիսը՝ ո՞վ էր Թումանյանի ընտանիքում ամենաչարաճճի երեխան, բանաստեղծն ինչպե՞ս էր դիմում «Վերնատան» կին հյուրերին, Թիֆլիսում նրա նախաձեռնությամբ ի՞նչ ավանդատոնի է սկիզբ դրվել, որը նշվում է մինչև հիմա, և ի՞նչն է այդ ավանդատոնի խորհրդանիշը, Թումանյանի ո՞ր ստեղծագործության անանուն հերոսուհուն է երգահան Ալ. Սպենդիարյանը անուն տվել, ի՞նչ են խորհրդանշում բանաստեղծի տուն-թանգարանի 54 աստիճանները և այլն: Հնչեցին հարցեր, որոնք վերաբերում էին Թումանյանի առնչություններին Սայաթ-Նովայի, Կոմիտասի, Զորավար Անդրանիկի, Խրիմյան Հայրիկի, Ալ. Մյասնիկյանի, Դեմիրճյանի, Ֆիլիպ Վարդազարյանի հետ: Օրինակ՝ բանաստեղծի 50-ամյակի հանդիսության ժամանակ հոբելյարի և Անդրանիկի կենացներին վերաբերող հարցն ուշագրավ էր ոչ միայն պատասխանի, այլև խոսքիմաստի առումով: Անդրանիկի կենացի ժամանակ Թումանյանն իր բաժակաճառում ասում է. «Երեսուն տարի առաջ մի հայ ժողովուրդ էր, մի Խրիմյան, անցավ երեսուն տարի, հիմի էլ մի հայ ժողովուրդ է, մի Անդրանիկ...»: Ընդհատելով Թումանյանի խոսքը՝ Զորավարը նստած տեղից վրա է բերում. «Կանցնի էլի երեսուն տարի. ո՛չ Խրիմյան կլինի, ո՛չ Անդրանիկ, կմնա «Շունն ու կատուն»...

Միջոցառման կազմակերպիչ Մ. Բալայանի խոսքով՝ իրենց նպատակը ոչ թե դժվարագույն հարցերի կամ բանաստեղծի կյանքի՝ բոլորին անհայտ էջերի ընտրությունն էր, այլ ներկաներին ծանոթացնել նրա հետ մեր մյուս մեծերի կապերին առնչվող դեպքերին: Հարցերի որոշակի խումբ աղերսվում էր Ստեփանակերտին. ինչպես՝ քաղաքի Թումանյան փողոցում տեղադրված են երկու մեծերի արձանները. ովքե՞ր են այդ երկու մեծերը (հուշում՝ նրանք ապրել են նույն դարաշրջանում, մեկն ուսուցանել է, մյուսն աշակերտել), նույն փողոցում է գտնվում մեկ այլ մեծ հայի անունը կրող հաստատությունը, ո՞վ է նա (հուշում՝ նա բանաստեղծ է, երգիչ, դերասան և ազգային հերոս), մայրաքաղաքում տեղադրված է բանաստեղծի հայտնի անվանակցի հուշարձանը, ցավոք, նրա անունը հուշաքարին սխալ է գրված. ո՞վ է այդ մեծ հայը... Եվ այսպես՝ մեկը մեկից հետաքրքիր հարցեր, որոնք ոչ միայն իմացական մեծ պաշար են ենթադրում, այլև տրամաբանելու, կռահելու ունակություն: Դժվար հարցերի պատասխանները գտնելուն օգնում էին հուշող բանավոր լրացումները, նկարելուկները. վերջիններն առավելապես միտված էին սովորողների լեզվաբանական գիտելիքների խթանմանը: Առաջին փուլի ավարտին մինչ մրցատյանը կհաշվեր միավորները, «Խոջիվանք» թիմի ներկայացուցիչն ասմունքեց «Հայոց վիշտը» բանաստեղծությունը: Երկրորդ փուլը նույնպես հետաքրքիր և աշխույժ մթնոլորտում անցավ: Ավարտին մրցավարը բլից-հարցերով մրցության հրավիրեց բարձր միավորներ հավաքած՝ «Հայոց լեռներում» և «Խոջիվանք» թիմերի ավագներին: 10 միավորով հաղթեց «Խոջիվանք» թիմը: «Անուշ» օպերայից «Ամպի տակից» աղջիկների հայտնի խմբերգով եզրափակվեց խաղ-մրցույթը:

Բոլոր ժամանակների, բոլոր սերունդների մեծ բանաստեղծին նվիրված միջոցառումն ավարտվեց արդեն ավանդական դարձած՝ գիրք նվիրելու արարողությամբ: Մանուշ Բալայանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին և գրքեր նվիրեց բոլոր թիմերին՝ «Հետաքրքրաշարժ պատմություններ հայ մեծերի ու Հայաստանի մասին»՝ խորհուրդ տալով դրանք պահել դասարաններում, որպեսզի ոչ միայն թիմերի անդամները, այլև նրանց համադասարանցիները հնարավորություն ունենան ընթերցել: Իսկ մրցույթի հաղթող թիմը լրացուցիչ պարգևատրվեց նաև «Վերնատան» անդամների գունավոր լուսանկարով: Հետևելով օրվա խորհրդին՝ 12-րդցիներն իրենց դասղեկին, ուսուցիչներին և միմյանց նվիրեցին գրքեր՝ տոնը դարձնելով անմոռաց ու կատարյալ: Թռուցիկ ակնարկ գցելով հենց միայն գրքերի վերնագրերին ու հեղինակների անուններին՝ անչափ ուրախացա, քանի որ ոչ միայն հայ գրականության մեծերին հանդիպեցի, այլև համաշխարհային համբավ վայելող դասականներին ու ժամանակակից գրողներին: Կարծես սառույցը հալվում է. գիրքը վերագտնում է ընթերցողին և համակարգչային ու բարձր տեխնոլոգիաների այս դարում գիրքը վերահաստատում է իր անանց արժեքը:

ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆ, ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Յուրաքանչյուր ազգի պատմության մեջ անուններ կան, որոնցում խտացված է ազգի հոգեմտավոր և բարոյական նկարագիրը: Առանց դույզն-ինչ վարանելու կարող ենք ասել, որ հայերիս համար այդ ընդհանրական խորհրդանիշը Հովհաննես Թումանյանն է, որը յուրօրինակ մանրակերտն է հայ ազգային ոգու: Ոչ միայն մենք ենք Թումանյանով դարձել ինքնաճանաչ, այլև նրանով են մեզ ճանաչել օտարները և զարմացել հայ հանճարի թռիչքով: Ռուս գրող, հայ ժողովրդի մեծ բարեկամ Վալերի Բրյուսովի կարծիքով՝«Ամբողջությամբ վերցրած՝ Թումանյանի պոեզիան ինքը Հայաստանն է՝ հնադարյան և նոր, հարություն առած և դրոշմված բանաստեղծական տողերում մեծ վարպետի ձեռքով»: Մեր ամենաազգային, համազգային և համամարդկային բանաստեղծի մեծության ու հզորության գաղտնիքը հենց այն է, որ նա, Վահան Տերյանի խոսքով, «մեծ գեղարվեստագետ և ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ թարգմանն» է: Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրից մեկուկես դար է անցել, էլի՜ դարեր կգան ու կանցնեն, իր անունը անմահության լուսապսակով զարդարած «այս հմուտ, հանճարեղ Լոռեցին» (Ե. Չարենց) կհարատևի իրեն ծնող ժողովրդի հետ, քանի որ, իր իսկ խոսքով՝ «Տաղանդները ապրում են մի որոշ ժամանակաշրջանում, իսկ հանճարները՝ բոլոր ժամանակներում»: Այսօր էլ նա ուղեցույց աստղի պես լուսավորում է իր ժողովրդի ճանապարհը, քանզի «միայն մե՛կ բանաստեղծն է, ում հետ լինում է ամբողջ ազգը ամբողջ կյանքում՝ դեռ գրաճանաչ չդարձած և մինչև մահվան մահիճ» (Պ. Սևակ):

Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին, ամբողջ Արցախում մեկնարկել է բանաստեղծի 150-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքը: Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան գրադարանն այդ օրն իր հյուրընկալ հարկի ներքո մեկտեղել էր թումանյանական պոեզիայի սիրահարներին: ԱրՊՀ դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրուն Բաղդասարյանն իր ուսանողների հետ միասին թերթեց բանաստեղծի կյանքի ու ստեղծագործության էջերը: Բանախոսը հակիրճ անդրադարձավ բանաստեղծ, արձակագիր, ազգային և հասարակական գործիչ Թումանյանի գործունեությանը՝ ընդգծելով անզուգական գրողի ու մեծ մարդասերի հոգու հարստությունը և հանճարի շռայլությունը: Մայր բուհի բանասիրական ֆակուլտետի ուսանողները հանդես եկան ասմունքով: Նրանց ընտրած գործերում երևակվեց բանաստեղծի քնարն իր թեմատիկ ու ժանրային բազմազանությամբ: Միջոցառման մասնակիցների կատարմամբ հնչեցին երգեր՝ գրված բանաստեղծի խոսքերով, նաև՝ նրան նվիրված:

Արդեն մի քանի տարի է՝ Արցախում ևս Թումանյանի ծննդյան օրը նշվում է նաև որպես Գիրք նվիրելու օր: Բոլոր ժամանակների ամենալավ նվերը եղել և մնում է գիրքը: Գրադարանի տնօրինությունը շնորհակալություն հայտնեց ուսանողներին և, հետևելով օրվա խորհրդին, ապագա բանասերներին ընծայագրով գրքեր նվիրեց: Հաճելի անակնկալ էր սպասվում նաև միջոցառման մասնակիցներին: Գրադարանի նախասրահում ի ցույց դրված տասնյակ գրքերից նրանցից յուրաքանչյուրը հնարավորություն ուներ ընտրել իր նախասիրություններին համապատասխան որևէ գիրք: Տոնը կայացել էր. ընթերցողները ոչ միայն վայելեցին անմահ Թումանյանի քնարի զեղումներն ասմունքի ու երգի միջոցով, այլև իրենց հետ տարան մի ոգեղեն մասնիկ օրվա խորհրդից՝ լրացնելու իրենց գրադարակը, իսկ շատերն էլ՝ անձնական գրադարանը:

Մելանյա ՄԻԼՈՆՅԱՆ

ՄՆԱՑԵԼ Է ԲԵՐԴԸ ՄԵՋ

ԵՎՍ ՄԵԿ ՍԵՐՈՒՆԴ՝ ԹՐԾՎԱԾ ՄԱՅՐԵՆԻՈՎ

Սերունդների կրթության և դաստիարակության գործում ունեցած վիթխարի դերը պատկանում է մայրենիին: Մայրենին մեր ազգային դիմագիծն է, մեր անեզրության անպարագրելի մեծությունը:

Յուրաքանչյուր նոր սերունդ, կրթվելով մայրենիի ոգով, դառնում է կորովի հայ: Տիրապետելով մայրենիին՝ տիրապետում ես քո լեզվին, քո ինքնությանը, քո ազգային արժանապատվությանը:

Ազգի սնուցիչն է մայրենին, մեր ազգային հորովելը, ռազմի կոչը, ահագնացումի ճիչը: Մայրենին մեր սրբությունն է, հայի ոգու մշտաբորբոք կրակը

Ու ամեն մի նոր սերունդ նորովի լավ է սերտում մայրենիի դասը: Դա մեր պատվականությունն է, մեր ոգեղեն զարկերակը: Այդ զարկերակի բաբախյունից թնդաց պայքարի կոչը, և մայրենիով ազդարարվեց մեր հարատևությունը:

Արդեն մեկուկես տասնամյակ փետրվարի 21-ը Արցախում հայտարարված է Մայրենիի տոն: Այն, մեր ազգային հարատևության խորհրդանիշը լինելով, բերում է մեզ ոգեղեն լիցքեր, պատրաստականություն, խանդավառություն…

Ամեն տարի ԿԳՍՆ-ի կողմից հայտարարվում է մայրենիի միամսյակ: Ու սկսվում է եռուզեռը…

Մտքի եռուզեռ է Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցում: Դասարանները պատրաստում են միջոցառումներ, պատի թերթեր, երեխաների շուրթերին ծաղկում են մայրենածուծ ասույթներ, և տոն է կազմակերպվում, հայրենաշունչ տոն…

Այս անգամ բեմում են դպրոցի 6-րդ «ա» դասարանի աշակերտները՝ մայրենիի ուսուցչուհի Օլգա Իշխանյանի գլխավորությամբ:

Սկսվում է մայրենիի դասը «Ռանչպարների կանչի» բեմականացմամբ՝ Այբ, բեն, գիմ, ե՛լ, Հովակի՛մ… Լավ էր սերտված, բայց աշակերտներից մեկը չլսեց ուսուցչի ձայնը, ուշադրությունը ուրիշ տեղ էր: Վեր կացավ, իմացածն ասաց և ուզեց գնալ դեպի դուռը՝ ասելով.

- Իմ դասը վերջացավ, վարժապե՛տ, թույլ տուր համբուրեմ ձեռքը այն մարդու, ով հայոց այբուբենի մշակն է եղել այսքան տարի: Օրհնյալ լինես դու, Մեսրոպ Մաշտոց: Օրհնյալ լինես և դու, իմ ուսուցչուհի՛… Ինձ պես պատանին իրավունք չունի այժմ նստել դասի: Ինձ հայրենիքն է սպասում… Երբ կազատեմ հայրենիքս և հաղթանակի բերկրանք կբերեմ, այդժամ միայն կվերադառնամ…

Ուսուցչի աչքերում արտասուք երևաց:

«Ռանչպարների կանչով» սկսված դասը շարունակվեց մարտական ոգով տոգորված երգով: Խրոխտ հնչում է հայրենիքի երգը.

Վրեժը խեղդում է ինձ
Սուրբ հողն է կանչում հեռվից
Պիտի գնանք անպայման
Փրկենք հողը պապական….

Դահլիճում կիսաբոլորակ կանգնում են սաները՝ շարունակելով մայրենիի ու հայրենյաց դասը.

- Ինչու ենք սիրում հայոց լեզուն, ինչու ենք այդ լեզուն կոչում մայրենի: Գուցե պատճառն այն է, որ մեր լսած առաջին բառերը, առաջին կաթոգին խոսքերը, օրորոցային երգերը մեր մորից ենք լսում, և դրա շնորհիվ է, որ հայոց լեզուն մեզ համար դառնում է նույնքան հարազատ, որքան՝ մայրը: Պատահակա՞ն է, արդյոք, ինչքա՞ն հաճախ են «մայրենի լեզու» և «մայր» բառերը զուգորդվում, ի մի հյուսվում:

Շատ բանից է մեզ զրկել թշնամին, իզուր…, սակայն չի հատվել լեզուն:

Հնչում են սևակյան պատգամներ՝ «Մեր մեծ երթի գավազանակիր», «Մեր ազնվության գովասանագիր», «Մեր սրբություն՝ կնքված Մեսրոպով, Նարեկացիով օծված ու յուղված», «Մտքի պահեստ, հոգու օթևան»:

Չարենցյան բնութագրումներ՝ «Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս…, պայծառ է նա որպես մշտաբորբոք փարոս՝ վառված հրով անշեջ դարերում հին»:

Շիրազյան խրատանին՝ «Պանդխտությունն է դեռ պոկում հայ բերանից հայոց լեզուն», «Օտարն հայոց մահն է ուզում», «Բայց նա է հայ, ով հովազի արնախում երախում էլ իր մայրենի լեզվով խոսի…», «Հայոց լեզվով, որ միշտ ջահել, մեզ բյուր դարեր հայ է պահել»:

Հնչում են հայ դասական և ժամանակակից մարգարիտները.

Քանի կա հողը մեր հայրենական,
Կան ծաղկունքն անշեջ, ժպիտը մանկան,
Պիտ շողա՝ նման վառ ծիածանի
Բյուրեղյա քերթվածք՝ բարբառ մայրենի:

Քանի Դավթի պես՝ կայծակը ձեռքին՝
Պաշտպան ենք կանգնել հայոց լեռներին,
Դու երբեք, երբեք, երբեք չես մեռնի
Մեր հույս, մեր Աստված՝ բարբառ մայրենի:

Բեմում տարածվում է մայրենիի հոգեպարար երգը. «Պատմե՛ք, վանքի մաշված քարեր, հայր Մաշտոցի կյանքի մասին, թե նա ինչպես գիրն արարեց, լույս պարգևեց հայոց ազգին….»: Երգի տակ պարում են նազանի աղջիկները:

Մայրենիի հանդեսը համեմվում է գեղեցիկ ասույթներով.

«Մայրենի լեզվի բառերը մենք զգում ենք, իսկ օտար լեզվինը՝ հասկանում, սովորում, հիշում»:

«Մայրենին մեր առաջին աղոթքն է, որ շնորհեց իր կանչը մեր արյան մեջ, համը մեր հացի, ցոլքը մեր հրի, ոսոխների դեմ հզոր որոտաց: Մենք մայրենին երդում դարձրինք»: Շարունակվում է դավթյանական կոչը՝ ու մենք դարձրինք քեզ երդում, ոգի, ու՝

Հողմերից փրկված կանթեղի նման քեզ պիտի տանենք
Եվ տանենք իբրև երդում ու հավատ, իբրև սրբազան հաց, գինի ու հուր
Եվ հիշենք, որ երբ հայրենիք ասինք հողին այս քարոտ
Մայրենի դրինք անունը քո սուրբ:

Հնչում է «Տուն իմ հայրենի» երգը դասարանի կատարմամբ:

Շարունակվում են ասույթները՝ «Մարդու լեզուն իր նավի ղեկն է», «Ցորեն հաց չունես, ցորեն լեզու ունեցիր»:

Միջոցառումն ամբողջանում է կապուտիկյանական խոսքի երդմնապահությամբ.

Ժամանակի ակունքներից ես գալիս դու, իմ հայ լեզու, դարերի լեռնապարերի վրայով…

Երդվում եմ՝ ծնունդովս կամուրջ դառնալ քո դարեդար անցումին, քար դառնալ քո պարսպացյալ ամրությանը, աղոթարար լինել քո սրբազնագույն տաճարին…

Երդվում եմ քեզ կրել շնչովս, արյունովս, այրումովս…

Մայրենիի հանդիսությունն ավարտվեց միասնության խրոխտ պարով:

Եվս մի սերունդ թրծվեց մայրենիի զորավոր ոգով ու նրա այդ պատգամը հավերժ կկրի իր հոգում:

Միջոցառման ավարտին դպրոցի տնօրեն Լիանա Հարությունյանն ամբողջացրեց ասվածը՝ հավելելով, որ խոսել մայրենի լեզվով, նշանակում է խոսել դարերի լեզվով…

Տնօրինության կողմից դպրոցի մի խումբ շնորհալի աշակերտների շնորհվեցին շնորհակալագրեր Մայրենիի տոնին նվիրված շարադրությունների մրցույթին լավագույնս մասնակցելու համար:

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿԸ ԵՎ ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐԸ ՎԱՂՈՒՀԱՍԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Կյանքը երազ է,
Երազն էլ մի կյանք,
Երկուսն էլ անցվոր,
Երկուսն էլ պատրանք:
Եվ թե հաստատուն մի բան կա անմահ,
Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա…

Հովհաննես Թումանյան: Մարդ, ով իր գործերով ապրում է յուրաքանչյուր հայի սրտում: Այո՛, ճիշտ է բանաստեղծի խոսքը՝ աշխարհում անմահ միայն իմաստուն հոգին է: Անմահացավ Մեծն գրողը, Մեծն հայը՝ բնակվելով յուրաքանչյուրիս սրտում: Իր գրվածքներում գործի անմահության խոսք հնչեցնելով՝ ինքն անմահացավ իր գործերով, իր ես-ով ու իր ժողովրդով:

Փետրվարի 19-ին Լոռու Դսեղ գյուղում 150 տարի առաջ փայլատակեց հայոց գրական աստղաբույլի աստղերից մեկը՝ Հովհաննես Թումանյանը: Այսօր այդ օրը ոչ միայն Դսեղում, այլև յուրաքանչյուր հայ օջախում տոն է՝ ողողված թումանյանական ոգով:

Փետրվարի 19-ին թումանյանական ոգին ու շունչն էր թևածում նաև Վաղուհասի Գ. Մուրադյանի անվան միջնակարգ դպրոցում: Աշակերտները մեծ խանդավառությամբ պատրաստվել էին տոնին: Հոբելյանական միջոցառումն սկսվեց Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի նախերգանքով: VI դասարանի աշակերտները հայոց լեզվի ուսուցչուհի Ե. Հայրապետյանի հետ անակնկալ էին պատրաստել՝ ներկայացնելով «Ճամփորդները» և «Անհաղթ աքլորը» հեքիաթների բեմադրությունը: Բոլորի սրտում Մեծն Լոռեցու սիրտն էր բաբախում, բոլորի հոգում Թումանյանի հոգին էր, որն ապրելու է հավերժ, քանի դեռ ընթերցում, զգում և ապրում է հայ ժողովուրդը:

Թումանյանական տոնին զուգակցել էինք Մայրենիի օրվան նվիրված միջոցառումը: Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհիներ Հ. Պետրոսյանի և Է. Հարությունյանի կազմակերպած միջոցառմանն աշակերտները ներկայացան ասմունքով ու երգով: Պատահական չէ Մայրենիի օրվան նվիրված միջոցառումները Թումանյանի հոբելյանական միջոցառման ժամանակ, քանի որ մաշտոցյան գիրն անմահ է նաև հայ մեծ բանաստեղծի գրվածքների միջոցով:

Մայրենիի օրվան նվիրված միջոցառումները բազմաթիվ ու բազմաբնույթ էին: Թումանյանական միջոցառումները շարունակեցին IV դասարանի դասվար Ռ. Ստեփանյանը և II դասարանի դասվար Դ. Վերդյանը: Վերջինիս կազմակերպած նկարչության թեմատիկ մրցույթում I, II, III տեղեր զբաղեցրած աշակերտներն ստացան խրախուսական նվերներ, իսկ Ռ. Ստեփանյանի աշակերտները երգի, պարի և մեր մայրենին փառաբանող բանաստեղծությունների միջոցով ոսկեղենիկ մայրենիի ոգեղեն շունչը փոխանցեցին բոլորիս:

Անմահ է մեր լեզուն, անմահ է Թումանյանը, և դարեդար հնչելու է Մեծն մարգարեի խոսքը.

Գործն է անմահ, լա՜վ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնե՜կ նըրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

Ե. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Վաղուհասի Գ. Մուրադյանի անվան միջն. դպրոցի հ. լեզվի եւ գրակ. ուսուցչուհի

ՄԱՆԿԱՆՑ ՇՈՒՐԹԵՐՈՎ

Հայ մարդը ավելի լավ է համր լինի, քան թե օտարախոս:

Գ. Նժդեհ

Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակը, Գիրք նվիրելու օրը և Մայրենիի օրը Մարտունու հ.1 մանկապարտեզում նշվեց մեծ խանդավառությամբ: Ավագ խմբի դաստիարակներ Ալինա Հայրապետյանի և Աննա Սարգսյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց միջոցառում: Ներկա էին Մարտունու արվեստի դպրոցի տնօրեն Ալվինա Միրզոյանը, հ.2 դպրոցի դասվար Գայանե Գրիգորյանը, ծնողներ, հյուրեր: Մանկապարտեզի սանիկների հոգեհմա սրտի խոսքը յուրօրինակ խոնարհում էր Ամենայն հայոց բանաստեղծին և մեր ոսկեղենիկ մայրենիին: Նրանք արտասանեցին մեր անվանի գրողների թևավոր խոսքերից, երգեցին և կարևորեցին օրվա մեծ գաղափարը, քանզի բանաստեղծի խոսքով՝ «Ինչ ունենք էլ աշխարհում, որ այսքան մերը լինի…»:

16-դարյա բարձունքից ակնածանքով ենք գլուխ խոնարհում մեր հրաշակերտ ու քաղցրահնչյուն ոսկեղենիկ մայրենիի առաջ: Մայրենի, որ դարերի քառուղիներով է անցել և դաժան դարերի հորձանուտում մաքառելով՝ վերընծայուղվել, հղկվել ու անաղարտ մեզ է հասել: Այսօր այն մեր շուրթերին նոր շունչ ու ոգի է առնում, ծնվում յուրաքանչյուր հայ նորածնի հետ, ըմբոստանում ամեն անգամ, երբ թշնամու է հանդիպում: Հայոց լեզուն չի հանդուրժում դաժանություն ու կապանքներ, սակայն անհրաժեշտության դեպքում չի ընկրկում և արժանի հարված է հասցնում հակառակորդին: Պետականորեն Մայրենիի օր հռչակելու փաստը վկայությունն է այն բանի, որ մեր լեզվի պաշտպանությունը վերահսկվում է պետության կողմից և հուսալի ձեռքերում է…

Դասվար Գայանե Գրիգորյանը, արվեստի դպրոցի տնօրեն Ալվինա Միրզոյանն իրենց սրտի խոսքն ուղղեցին երեխաներին՝ մաղթելով ճիշտ և մաքուր հայերենի իմացություն, առողջություն և անսահման սեր դեպի հող հայրենին:

Մանկապարտեզի վարիչ Էմմա Երեմյանը շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին՝ երաժշտավար Կարինե Բալայանին, պարուսույց Ալվարդ Մանասյանին բովանդակալից միջոցառման համար:

Ալինա ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մարտունու հ.1 մանկապարտեզի ավագ խմբի դաստիարակ

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԹԸ ՄԵՋ

ԱՐՑԱԽՈՒՄ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ

ԱՀ ծանրամարտի ասոցիացիայի հրավերով փետրվարի 18-28-ը Ստեփանակերտում պարապմունքներ անցկացրեց ծանրամարտի աշխարհի և Եվրոպայի կրկնակի չեմպիոն, ՀՀ սպորտի վարպետ Նազիկ Ավդալյանը: Ճանաչված մարզիկին ընդունեց ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանը: Հանդիպմանը ներկա էր փոխնախարար Աշոտ Դանիելյանը:

Ն. Աղաբալյանը, ողջունելով Ն. Ավդալյանի այցը, ասաց, որ միշտ առիթ է եղել հպարտանալ նրանով: Արցախում նա ունի շատ երկրպագուներ և վստահ է՝ նրա ներկայությունը ոգեշնչելու է մեր երեխաներին:

Ն. Ավդալյանն ասաց, որ վաղուց էր որոշել գալ Արցախ և գործունեություն ծավալել այստեղ, իր փոքրիկ մասն ունենալ Արցախի զարգացման գործում:

Հանդիպման ընթացքում նախարարը ներկայացրեց Արցախում սպորտի զարգացմանն ուղղված քաղաքականությունը, նշեց, որ վերջին տարիներին իսկապես մեծ աշխուժություն է ապրում մարզական կյանքը մեր հանրապետությունում: Կառավարության որոշմամբ մարզիկների խրախուսման մեջ փոփոխություններ են կատարվել տարիներ առաջ, ինչը մեծ թափ է հաղորդել տարբեր մարզաձևերի զարգացմանը, և այսօր ունենք բավականին խոստումնալից մարզիկներ տարբեր մարզաձևերով: Նույնիսկ խնդիր է առաջացել կարգավորել այդ դաշտը, որպեսզի մարզիկները հեշտ արդյունքների հետևից չընկնեն, և օլիմպիական ձգտումն ու սկզբունքները չպակասեն նրանց մեջ: «Մենք սպորտը դիտարկում ենք ոչ միայն մարզումների միջոցով մեր երեխաներին ու երիտասարդներին կոփելու, այլև որպես օլիմպիական սկզբունքներով դաստիարակելու հնարավորություն»,- ասաց նա՝ նշելով, որ այդ առումով Ն. Ավդալյանի օրինակը վարակիչ կարող է լինել, քանի որ իր անցած ուղիով նա ցույց է տվել, թե ինչպես կարելի է հաղթահարել փորձությունները, երբեմն և՝ անհաջողությունները ու հասնել հաղթանակի:

Ն. Ավդալյանը հավաստեց, որ սպորտը մարդու մեջ ձևավորում է բնավորություն, կամքի ուժ, նպատակին հասնելու ձգտում բոլոր բնագավառներում: Սպորտի զարգացման համար Ն. Ավդալյանն առաջնահերթ է համարում մարզագույքով ապահովվածությունը: Դրան կնպաստի միանվագ ներդրումը, որի

շնորհիվ ձեռք բերված գույքը կծառայի 25-30 տարի: Մասնավորապես ծանրամարտում հարթակը և ծանրաձողն այն նվազագույնն են, որ պետք է լինեն: Նա հավաստեց, որ մեր ժողովուրդն օժտված է ֆիզիկական և կամային որակներով ու մեծ հնարավորություններ ունի աշխարհին ներկայանալ սպորտի ոլորտում: Եվ բերեց հետևյալ օրինակը. մի քանի տարի առաջվա տվյալներով Չինաստանում կար 8 մլն ծանրորդ, որոնցից 2-2,5 մլն-ը՝ կին: Յուրաքանչյուր քաշային կարգում հաշվվում էր մոտ 200 հազար մարզիկ: Այդ երկրի առաջնության համար ամեն քաշային կարգում անցկացվող մրցույթը տևում էր ամիսներ: Աշխարհի առաջնությանը ամեն քաշային կարգից ներկայանում էր մեկ մարզիկ, որը պարտվում է այնպիսի երկրների, ինչպիսին Հայաստանն է, այն դեպքում, երբ մենք ունենում ենք ընդամենը 5 մարզուհի, ու միշտ այդ 5-ն են գնում մրցումների, որովհետև այլ տարբերակ, ընտրություն չկա: Եթե այլ երկրներում 100 մարզիկից մեկն է հասնում հաջողության, Հայաստանում՝ տասից ութը:

Մի քանի օր այստեղ անցկացրած պարապմունքներից Ն. Ավդալյանը եկել է այն համոզման, որ արցախցու գենի մեջ կա այդ սպորտաձևը: Հիմա 10 երեխա է պարապում ծանրամարտ, բայց պայմաններ լինելու դեպքում նրանց թիվը կավելանա, իսկ հետևողական աշխատանքի արդյունքում մի քանի տարի անց նրանք կկարողանան Եվրոպայում ներկայացնել երկիրը, վստահ է նա: Հուսով է, որ կընդլայնվի ծանրամարտով զբաղվող նաև կանանց շրջանակը. «Մեր կանայք ավելի ուժեղ են, քան այլ երկրների: Ֆիզիկական և կամային որակներն են մեր կանանց ավելի ուժեղ դարձնում»: Նրա համոզմամբ՝ սխալ պատկերացում կա կանանց ծանրամարտի մասին: Ոմանք կարծում են, թե դա շատ ծանր մարզաձև է: Սակայն կարծրատիպը պետք է փոխվի: Ն. Ավդալյանը վկայեց, որ ինքը տարիներ առաջ զբաղվել է ակրոբատիկայով, որը շատ ավելի դժվար մարզաձև է, քան ծանրամարտը: «Այնքան էլ նորմալ չէ, որ կինը տանը ծանրություն է բարձրացնում, հատկապես՝ գյուղերում, և դրան հանգիստ նայում ենք, ու բոլորի համար դա նորմալ է, իսկ երբ պետք է մարզադահլիճում երկու ժամ պարապել, ճիշտ տեխնիկայով իրենց ուժը ճիշտ ներդնել և դրանով ամեն ինչի հասնել, իրենց երկիրը ներկայացնել, սրան մի քիչ այլ կերպ են նայում: Ամեն նոր բան մի քիչ դժվարությամբ է ընդունվում մեզանում: Ժամանակի խնդիր է: Այս կարծրատիպը կոտրելու անհրաժեշտություն կա: Ես ուզում եմ ապացուցել, որ ծանրամարտը չի կոպտացնում կնոջը. մարդն այնպիսին է, ինչպիսին կա: Բնականաբար սպորտով զբաղվելով՝ մի քիչ աթլետիկ ես դառնում, բայց երբ թողնում ես, նախկին կեցվածքդ ես ընդունում»,- ասաց նա:

Պետական քաղաքականության շնորհիվ այսօր Արցախում շատ երեխաներ ու երիտասարդներ են զբաղվում սպորտով, և եղած մարզադահլիճները չեն բավականացնում: ԿԳՍ նախարարը տեղեկացրեց, որ այսօր այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ են տարվում: Ներկայում մարզական մի քանի կառույցների շինարարություն է ընթանում մայրաքաղաքում ու շրջաններում: Մասնավորապես Ստեփանակերտում «Տաշիր» բարեգործական հիմնադրամի օգնությամբ կառուցվում է մեծ մարզահամալիր, որը հնարավորություն կտա նաև միջազգային մրցաշարեր անցկացնել:

Նշանավոր մարզուհու շփումները կօգնեն այլ կարծիք կազմել, և նա խոստացավ իրենից կախված ամեն ինչ անել Արցախում ծաղկեցնելու ծանրամարտը, եթե կարիք լինի, գուցե և ընտանիքով տեղափոխվի: Արդեն պայմանավորվածություն կա ֆեդերացիայի նախագահի հետ, որ ժամանակ առ ժամանակ կայցելի Արցախ ու պարապմունքներ կանցկացնի:

«Ձեր կարիքը կա, ընդամենը Ձեր որոշումն է պետք»,- ասաց նախարարը՝ Ն. Ավադալյանին հրավիրելով ընտանիքով ամառանը ներկա լինել ConiFA-ի հովանու ներքո Արցախում ֆուտբոլի Եվրոպայի առաջնության անցկացմանը:

Սպորտի զարգացման ճիշտ քաղաքականություն իրականացնելու նպատակով Ն. Աղաբալյանը արծարծեց ոլորտում խորհրդակցական մարմին ստեղծելու, լավագույն հայ մարզիկներին ընդգրկելու հարցը, ինչին համակարծիք է Ն. Ավդալյանը, որը պատրաստակամություն հայտնեց անել իրենից կախված ամեն ինչ:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ԵՐԿԻՐԸ ՃԱՆԱՉԵԼԻ ԴԱՐՁՆԵՆՔ ՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ

Արցախի ծանրամարտի ասոցիացիան հիմնադրվել է 2017թ.: Համախմբելով շուրջ 30 մարզիկի՝ այն շարունակում է ավելացնել ծանրամարտ պարապողների թիվը, ինչպես նաեւ Արցախում սպորտը զարգացնելու ուղղությամբ ծավալում է զգալի աշխատանք: Ասոցիացիայի նախագահ Արթուր Շիրինյանից իմացանք, որ ծանրամարտը սիրողների թիվն Արցախում ավելանում է. պարապելու են գալիս 8 տարեկանից: Պարապմունքներն անց է կացնում առայժմ մեկ մարզիչ՝ Արթուր Նահապետյանը: Հնարավոր է, որ համապատասխան պայմաններ ունենալուն պես համալրվի մարզչական խումբը:

Ասոցիացիան մարզադահլիճ ունի Ստեփանակերտում, որտեղ կոնկրետ պարապում են ծանրամարտ: Նպատակ ունեն ընդլայնել տարածքը, առանձնացնել տեխնիկական և ուժային մարզումները: Սկսված են նոր մարզադպրոցի նորոգման աշխատանքները Շուշի քաղաքում, որը կծառայի ոչ միայն ծանրամարտի, այլեւ տարբեր մարզաձեւերի պարապմունքներին: Շուշիում նոր մարզադպրոց ստեղծելու հետ կապված աշխատանքներն ու ծախսերն իր վրա է վերցրել ծանրամարտի ասոցիացիան:

2018թ. մայիսին կազմակերպվել էր Արցախի բաց առաջնություն, որին մասնակցել է շուրջ 80 մարզիկ: Ներկա էին մեր հայրենակից՝ ծանրամարտի աշխարհի, Եվրոպայի պատանիների օլիմպիական չեմպիոններ: Ասոցիացիան սերտ կապի մեջ է ՀՀ ծանրամարտի ֆեդերացիայի հետ: ՀՀ հավաքականի անդամները հաճախակի են լինում

Արցախում՝ հավաքականի մարզիչ եւ ֆեդերացիայի քարտուղար Փաշիկ Ալավերդյանի գլխավորությամբ: Նրանց ներկայությունն ու փորձի փոխանցումը խթանում է արցախցի սկսնակ մարզիկների մոտ սպորտի հանդեպ սեր ձեւավորվելուն, ծանրամարտ մարզաձեւի նրբություններին ծանոթանալուն, ոգեւորելուն:

Ասոցիացիայի նախագահի նախաձեռնությամբ ավանդույթ դարձած՝ ամեն ամիս Արցախ են գալիս պրոֆեսիոնալ ծանրորդներ՝ ոգեշնչելու եւ ծանրամարտի գաղտնիքները բացահայտելու մարզիկներին: Այս ամսվա հյուրը ճանաչված մարզիկ, ծանրամարտի աղջիկների աշխարհի եւ Եվրոպայի չեմպիոն Նազիկ Ավդալյանն էր: Տասնօրյա այցի ընթացքում ցուցաբերված մասնագիտական մոտեցումն ու հիմնական պարապմունքների անցկացումն զգալիորեն բարձրացրել է մարզիկների՝ մարզաձեւին տիրապետելու մակարդակը:

Մասնագիտացված պարապմունքներից մեկին ներկա էր «Լուսարար»-ը, որտեղ առիթ ունեցավ զրուցելու աշխարհահռչակ հայ ծանրորդուհու հետ: «Ծանրամարտ պարապող մարզիկների թիվը քիչ է Արցախում, բայց քչի մեջ շատ են խոստումնալից մարզիկները: Որպես օրինակ ասեմ, որ տասը մարզիկից ութը կարող է լավ արդյունքներ դրսեւորել, իհարկե, հետեւողական աշխատանքի դեպքում: Պարապմունքների ընթացքում ավելի շատ ուշադրություն ենք դարձնում տեխնիկական կողմի, հետո՝ ֆիզիկական տվյալների վրա: Իսկ ամենաառաջնայինը մարզիկների մոտ կամային որակների ձեւավորումն է: Ծանրորդը պետք է հանգիստ լինի, ունենա արագ կենտրոնանալու, հավաքվելու կարողություն: Սպորտում ամեն ինչ կարող է պատահել, ուրեմն՝ մարզիկը պետք է կարողանա ցանկացած իրավիճակում իրեն կառավարել: Ինչ վերաբերում է սպորտի զարգացմանը, ասեմ, որ այդ գործում պետք է լինել հետեւողական: Սպորտը պետք է անընդհատ զարգանա: Մենք սպորտային երկիր ենք, մեր գեների մեջ այն կա, ուրեմն պետք է նպատակային օգտագործել: Սպորտը եւ մշակույթը երկրի դեմքն են, և մենք կարող ենք մեր երկիրը ճանաչելի դարձնել այդ կերպ: Պետք է հնարավորություն ստեղծել, բարելավել պայմանները նպատակին հասնելու համար»,- ասաց Նազիկ Ավդալյանը:

Արթուր Շիրինյանի տեղեկատվությամբ՝ ասոցիացիայի մարզիկները պարբերաբար մասնակցում են ՀՀ առաջնություններին: Մեծ մասին հաջողվում է մրցանակային տեղեր զբաղեցնել: Մարտ-ապրիլ ամիսներին նախատեսվում է Վանաձորի ծանրամարտի բաց առաջնություն, որին կմասնակցեն նաեւ արցախցի մարզիկները, իսկ մայիսին՝ Արցախի բաց առաջնություն: Որոշ տեխնիկական խնդիրներ լուծելուց հետո հնարավոր կլինի առաջնությունն անցկացնել մեծ մասշտաբով՝ ներգրավելով Արցախի Հանրապետության կարգավիճակն ունեցող այլ երկրներից մարզիկների:

Ասոցիացիայի գործունեությունը միտված է ոչ միայն հայրենիքում սպորտը զարգացնելուն, այլեւ հայրենիքն աշխարհին ճանաչելի դարձնելուն, իսկ տեխնիկական խնդիրները ասոցիացիայի նախագահի հուսադրող խոսքով կրում են ժամանակավոր բնույթ:

Սոնյա ԱՎԱԳՅԱՆ

ՏԻԵԶԵՐՔԻ ՏԵՐՆ ԵՄ ԵՍ...

ԼԵԶՈՒՆ ՄԵՐ ԿԱՐԻՔՆ ՈՒՆԻ

Ոչ թե «Ջոկած մոմենտա», այլ «հասկացված պահ է», ոչ թե «Давай, տղեք», այլ՝ «Առա՛ջ, տղաներ»,- գործընկերների ու իր աշակերտների մայրենին օտարամուտ տարրերից մաքրելու առիթն ամեն քայլափոխի բաց չի թողնում «Ոսկե դպրոց» հանրահայտ սերիալի հերոսուհի էլյան՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի ընկեր Անանյանը: Ցավոք, այսքանով սահմանափակվում է այս և հեռուստաեթերում մեծ արագությամբ միմյանց հաջորդող այլ սերիալների դրական ազդեցությունը դպրոցականների գրագետ խոսքի վրա: Տեղի է ունենում ճիշտ հակառակը: Ընթերցասիրությունից չափազանց հեռու ժամանակակից դպրոցականների բանավոր խոսքի տունը քանդող բազմաթիվ հանգամանքների շարքը գլխավորում են հենց հայրենական արտադրության հեռուստասերիալները: Գրավոր խոսքն էլ իր մահկանացուն է կնքում նորին գերազանցություն ինտերնետի անծայրածիր տիրույթներում, ուր մուտք գործել կարողանում է ցանկացածը, ասել է թե՝ խոսք լինել չի կարող ուղղագրական կանոնների պահպանման վերաբերյալ: Ուստի լեզվական խավարում խարխափող դպրոցականի համար միակ ջահակիրը դառնում է ուսուցիչը և, առաջին հերթին՝ մայրենիի ուսուցիչը: Չափազանցրած չեմ լինի, եթե ասեմ, որ մայրենիի ուսուցիչների ուսերին այսօր դրված է ամենածանր բեռը՝ բացարձակապես մեն-մենակ պայքարել հայոց լեզուն աղավաղող հզոր հանգամանքների դեմ:

Օրերս Խնապատի միջնակարգ դպրոցում Մայրենիի միամսյակի կապակցությամբ ընդօրինակման դաս էին կազմակերպել դասվարներն ու հայոց լեզվի ուսուցիչները: Միամսյակին նվիրված միջոցառումների հարուստ ու հետաքրքիր աշխատանքային պլանի բաղկացուցիչ մասերից ընդամենը մեկն էին այդ դասերը (պլանի հեղինակ և միջոցառումները համակարգող՝ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Գայանե Աղաբաբյան):

Բնականաբար դասերը մանրամասն լուսաբանելու հարկ չկա: Կխոսեմ այն ամենից, ինչի մասին լռելն անհնար է: Ուսուցիչները ջանք ու եռանդ չէին խնայել հագեցած դաս կազմակերպելու համար:

Առանցքում մաշտոցյան գրերն էին ու դրանց ազգապահպան նշանակությունը: Ահա մի հատված չորրորդ դասարանցի Հայկի նամակից՝ ուղղված Մ. Մաշտոցին (Մաշտոցին նամակ գրելը ևս ընդգրկված էր միջոցառումների ցանկում): «Առայժմ ես շատ բան չեմ հասկանում այն ծանր ու հերոսական աշխատանքի մասին պատմություններից, որ հուզմունքով պատմում է ուսուցչուհիս: Ասում է, որ դու ազգն ես փրկել՝ արարելով հայոց գրերը»: Ուսուցչուհի Ծաղիկ Հակոբյանն ակնհայտ հուզված էր նաև այս դասին: Պատասխանատվության զգացումն առավելապես աճում է մայրենիի դասերին: Պետք է անուշադրության չմատնել խոսքի և ո՛չ մի վքար, ո՛չ մի սխալ շեշտադրություն, ո՛չ մի ուղղագրական սխալ: Բայց նախ և առաջ հնարավորինս անթերի պիտի լինի քո խոսքը: Հատկապես տարրական դասարաններում աշակերտները հակում ունեն ընդօրինակել ուսուցչին. թե՛ նրա շարժուձևը, թե՛ հնչերանգը, թե՛ նրա բառապաշարը: Տիկին Հակոբյանի սաներն էլ բացառություն չեն: Ամփոփում էին «Ես այսպես ասեմ, դու այնպես հասկացիր» թեման ու արդեն յուրացրած առակների հերոսներին վերլուծելիս կարծես խոսում էին ուսուցչուհու շուրթերով՝ հուզառատ տոնով, արագախոս տեմպով, վայրկյանների ընթացքում մեծածավալ ինֆորմացիա ներկայացնելու պատրաստակամությամբ: Գիտունիկների եռանդուն աշխատանքը դասի վերջում փոխհատուցվեց ուսուցչուհու կողմից քաղցր նվերով՝ «Անաղարտ պահենք մայրենին» պատվիրանագրությամբ շոկոլադե կոնֆետներով: Այն, որ համտեսողները կհետևեն պատվիրանին, համենայն դեպս, այդ պահին կասկած չէր հարուցում:

Բացում ենք հարևան դասարանի դուռն ու միանգամից հայտնվում թատերական մթնոլորտում: III դասարանցիները (դասվար՝ Ժենյա Արզումանյան) գրերի գյուտի ստեղծման բեմականացումից մի դրվագ էին ներկայացնում: Վռամշապուհ արքան՝ ծիրանին ուսին, արքային վայել ծանր ու մեծ փաստարկներով խրախուսում է Մաշտոցին ձեռնամուխ լինել գրերի ստեղծման գործին: Փոքրիկ դերակատարներ Ավետն ու Արտյոմն այնպիսի լրջությամբ էին քննարկում օտար ազգերին ծուլվելու անխուսափելի վտանգը, որ, թվում էր, նախապես անգիր արած տեքստը չեն վերարտադրում, այլ կարևորում են սեփական դերն ազգապահպան գործում: Հանդիսատես-դասալսողի եզրահանգումը չի ուշանում. ուսուցչուհին հասել է իր գերնպատակին: Երրորդ դասարանցիները գիտակցական մակարդակով ընդունել և ընկալել են մաշտոցյան սխրանքը: «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց» թեմայով դասը 3-րդ դասարանում ավարտվում է 18-րդ դարում Ղազար Չահկեցի կաթողիկոսի գրած այբուբեն-աղոթքով. «Արարիչ, Բովանդակ.....»:

«Եվ հնչում է որպես աղոթք արքայական քո լեզուն»,- կարդում ենք տերյանական տողերը գրատախտակի վերևում հաջորդ՝ VI դասարանում: Երիտասարդ ուսուցչուհի Առլենա Գասպարյանի սաները նույնպես հյուրընկալել էին Մաշտոցին: Հայոց առաջին ուսուցչի՝ այս անգամ արդեն 6-րդցի դերակատարը ողջ դասի ընթացքում երեխաներին խրախուսում էր խոսել ոսկեղենիկ մայրենիով: Թե՛ գիտական, թե՛ դաստիարակչական տեսանկյունից հաջողված դասն ավարտվում է ուսուցչուհու խոսքով. «Չմոռանանք, որ լեզուն մեր հայրենիքն է. ինչպես հայրենիքը, այնպես էլ լեզուն կարիք ունի ամենօրյա պաշտպանության: Ուստի մեզանից մի բան է պահանջվում. ամեն օր, ամեն ժամ պահպանենք մեր լեզուն»: Աշակերտների ոգևորությունը կրկնապատկվում է, երբ յուրաքանչյուրի սեղանին հայտնվում են Թումանյանի հեքիաթները՝ նվեր ուսուցչուհու կողմից:

Իսկ II դասարանում բազմավաստակ ուսուցչուհի Ալվարդ Ղահրամանյանը մեզ տեղափոխում է հեքիաթների հրաշագեղ աշխարհ, որտեղ արցախյան բարբառակիր երկրորդ դասարանցիները վարպետորեն խոսում են թումանյանական լեզվով, իսկ վերջում անգիր ներկայացնում ասույթներ լեզվի մասին: Թերևս II դասարանը տարրական օղակի ամենաբարդ փուլն է: Երեխաների մի մասը դեռևս թոթովախոսություն ունի, բայց արդեն պետք է դրվի քերականական գիտելիքների հիմնաքարն ու մշակվի ընթերցանության տեխնիկան: Ուսուցչուհու տիտանական աշխատանքը չվրիպեց դասալսողների փորձառու աչքերից:

Սահյանական քնարերգությունը և ուսուցչուհի Անահիտ Գասպարյանի մեղմ ու թովիչ ձայնն առաջին իսկ րոպեներից բոլորիս գերում են 7-րդ «դ»-ում. «Հայաստա՛ն, անունդ տալիս ժայռի մեջ մի տուն եմ հիշում...»,- միմյանց շարունակելով՝ արտասանում են յոթերորդցիները: Օդը լցվում է «մամռոտած որմի» ու «առվույտի կապույտ ծաղկի» հոտերով: «Մենավոր բարդու շրշյունը» մեզ կանչում ու տանում է դեպի այն աշխարհը, որ մենք հայրենիք ենք կոչում: Գուցե ասածս պարադոքսալ է հնչում, քանզի այդ պահին էլ մենք մեր հայրենի հողում էինք: Արի ու տես, որ հայրենիքի հանդեպ սերն էլ բոլոր սերերի պես ամենքի մոտ տարբեր է լինում, ու հայրենասիրությունը բոլորս ընկալում ենք յուրովի: Սահյանը միավորում է բոլորիս. «Ուր որ նայում եմ, քարե բարձունք է.....»: Նրա քարեղեն համանվագի հնչյունները քար լռության մեջ ասես արձագանք են գտնում պոեզիա չսիրող ժամանակակից աշակերտների հոգում: Քարը փշրվում, ու ժայռի միջից բուսնում է Հույսը: Իմ Հույսն անուն ունի՝ Ուսուցիչ: Ոչինչ, որ կգտնվեն նաև այնպիսի ընթերցողներ, ովքեր ուսուցչին գովերգելն իմ կողմից անհամեստություն կհամարեն (հաշվի առնելով այն փաստը, որ ինքս էլ ուսուցիչ եմ): Բայց նաև համոզված եմ՝ հակաճառելու փորձ անելու համար էլ համարձակություն ունեցող չի լինի: Ուսուցիչը պարզապես այն մարդը չէ, ով բռնում է ձեր երեխայի ձեռքից ու տառ գրել է սովորեցնում, հետո էլ՝ վարժ կարդալ: Դա ինքներդ էլ կարող եք անել: Ուսուցիչը ոգեշնչում է: Այո՛, ոգեշնչում այնպես, ինչպես յուր ժամանակին Մաշտոցը ոգեշնչեց մի ողջ ազգի: Նա այդ ազգի վերջին հույսի շողն էր, որ լուսավորեց գալիքի ճամփան ու առաջնորդեց դեպի հավերժություն: Իսկ այսօր ազգն այլ խնդիր ունի՝ պահել ու պաշտպանել մեծն ուսուցչի գլուխգործոցը: Խնապատի Ա. Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի իմ գործընկերներն այդ առաքելությունը կատարում են փայլուն:

Ժայռի մեջ բուսած իմ Հույսը ճյուղեր է տալիս: Նա այլևս չի վախենում գիր ու գրականության հանդեպ տիրող համընդհանուր անտարբերությունից: Ամեն ինչ կորած չէ, քանի դեռ ունենք մայրենիի նվիրյալներ: Բայց նրանք էլ սատարման կարիք են զգում, քանզի պայքարն այս բոլորինս է: Ֆուտբոլային հանդիպման ժամանակ նույն «Ոսկե դպրոց» սերիալի (ֆիլմի բովանդակային և ուսուցողական թերի պատկերը հարցի մյուս կողմն է) ընկեր Անանյանը գռեհկաբանությունների սիրահար գործընկերոջ բառապաշարի հարստացման ուղղությամբ հերթական փորձն է կատարում՝ «էս ի՞նչ քացով խփեց» բացականչությանն ի պատասխան ասելով. «Պետք էր ասել. «Այս ի՞նչ կերպ խփեց Աքիլեսյան գարշապարին»: Անշուշտ, սա էլ ծայրահեղության դրսևորում է: Ոչ մեկն էլ չի կարող գլուխ գովել, որ առօրյայում ինքը հունահռոմեական դիցաբանության թևավոր արտահայտություններից է հյուսում իր խոսքը: Անհնար է (նույնիսկ չկա էլ դրա անհրաժեշտությունը) առավոտից ղեկին նստած հոգնատանջ ու կյանքի անարդարություններից դառնացած տաքսու վարորդին ստիպել անաղարտ պահել մայրենին ու, առավել ևս, մեջբերել դիցական կերպարներին: Բավական է և այն, որ բոլորս ուժերը ներածին չափ ջանանք չարատավորել մայրենին: Հակառակ դեպքում մի օր այն իսկապես կդառնա մեր Աքիլեսյան գարշապարը: Մինչդեռ դարեր ի վեր ազգի հարատևման գործում այն բիբլիական Սամսոնի վարսերի դերն է կատարել:

Մեդինա ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

ՄԵՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

Հ. Թումանյանի 150-ամյա հոբելյանը Ստեփանակերտի նրա անունը կրող հ. 9 հիմնական դպրոցում անցավ «Հոգևոր ողնաշարով աշխարհիկ մարդը» (Մարդը և բանաստեղծը) խորագրով: Միջոցառման հեղինակ՝ դպրոցի փոխտնօրեն Արմինե Հայրապետյանը բեմագրի առանցք էր ընտրել բանաստեղծի «Դեպի հայրենիք» անավարտ վեպը, որի միջոցով ներկայացվեց Թումանյանի ողջ կյանքը՝ սովորելու անհագ ծարավը, ընտանիքը, գրական կապերը, հասարակական-քաղաքական գործունեությունը, զրկանքները:

Բեմի ձևավորումն արդեն իսկ խոսում էր այս ամենի մասին: Այն կահավորված էր Թումանյանի տուն-թանգարանի նմանությամբ: Գործողությունները հիմնականում տեղի են ունենում նրա աշխատասենյակում: Գրողի գրադարանն է (Բազմած են շուրջըս նրանք ամեն օր, // Բոլոր հանճարեղ մեծերը աշխարհի, // Երգում են, պատմում, ներդաշնակ ու խոր // Միտքը ու գաղտնիքը մահի ու կյանքի, // Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանը ամեն օր, // Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ շոր), նրա սիրած սարի սպիտակ ծաղիկը ամենուրեք է: Թումանյանի և Կոմիտասի մեծադիր նկարները խորհրդանշում են երկու հայ մեծերի հոգևոր կապը:

Թումանյանի խոհերով ու գաղափարախոսությամբ, երգահան Տիգրան Մանսուրյանի երաժշտության ուղեկցությամբ աշակերտները թումանյանական ոճով, հայերենին հատուկ առոգանությամբ առանց արհեստական ելևէջների ներկայացնում են Թումանյանի ստեղծագործություններից հատվածներ, որոնք խորհրդանշում են գրողի կյանքի որևէ դրվագ: Չկա մի գործ, որ կենսագրական հենք չունենա: Թումանյանի ստեղծագործությունները նրա ապրած ժամանակաշրջանի գեղարվեստական արտացոլանքն են: Ստեղծագործել է բոլոր ժանրերով՝ յուրաքանչյուրի ընտիր տեսակով՝ հասկանալով, որ գյուղացու իրական վիշտն ավելի կարևոր է, քան Մասիսի գագաթին հիջած գրական ամպը: Նրա յուրաքանչյուր ստեղծագործություն սեր է ներշնչում դեպի ազնիվն ու բարին և ատելություն՝ դեպի այն ամենը, ինչ թշնամի է մարդուն ու մարդկությանը:

Բանաստեղծի սրտի միջով անցել են Համաշխարհային պատերազմ, Հայոց ցեղասպանություն, քաղաքացիական պատերազմ: Ազգի ցավերը ծանրացել էին նրա հոգում (30 տարին չբոլորած՝ նա արդեն ալեհեր, ժամանակից շուտ ծերացած մարդու տեսք ուներ):

Թումանյանն անմահ է իր գործերով, անմահ է իր գործունեությամբ, անմահ՝ իր ես-ով ու իր ժողովրդով, լուսավոր ապագայի սպասումներով...

Հոկտ. Թումանյանի հոբելյանը 9-րդ դպրոցում նշվեց որպես հայ ժողովրդի ոգու տոն:

ՄԿԱԳ տեղակալ Ա. Հայրապետյանը ևս մեկ անգամ ապացուցեց, որ դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը:

Սա նրա հերթական միջոցառումն էր, որի ձեռագրին ծանոթ յուրաքանչյուր ոք սրտի թրթիռով էր սպասում: Բոլորը խորապես տպավորված էին բեմագրով, երեխաների արհեստավարժ կատարումներով, բնական խաղով, երգ ու պարով, հագ ու կապով, կազմակերպչական աշխատանքներով: Առանձին հմայք ուներ ներդաշնակ գույներով բեմի ու դահլիճի կահավորումը: Յուրաքանչյուր ստեղծագործություն ուղեկցվում էր տեսասահիկով: Այս ամենի մեջ իր ուրույն ներդրումն ունի դպրոցի երգ-երաժշտության ուսուցչուհի Աստղիկ Միրզոյանը, որը ջանք ու եռանդ չի խնայում միջոցառումներին բարձր որակ ապահովելու համար՝ ներկայացնելով համապատասխան բովանդակությամբ երգեր: Վերջին տարիներին դասավանդում է նաև «Ազգային երգ ու պար» առարկան, որն անթերի ստացվում է թե՛ իր և թե՛ երեխաների մոտ:

Միջոցառմանը ներկա էին ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Ն. Աղաբալյանը, Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի պետ Կ. Մարգարյանը, մայրաքաղաքի բոլոր դպրոցների տնօրենները, փոխտնօրենները, հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ: Նախարարը բարձր գնահատեց միջոցառումը և շնորհակալություն հայտնեց նրա ղեկավար Ա. Հայրապետյանին, տնօրինությանը, մյուս աջակցողներին, մասնակիցներին, խոստացավ, որ կաջակցի միջոցառման մասնակիցներին հանդես գալ Երևանի Նարեկացի արվեստի կենտրոնում, բանաստեղծի ծննդավայր Դսեղում:

Նույն ոգևորությամբ ԿՍ բաժնի պետ Կ.Մարգարյանն ասաց, որ Ա. Հայրապետյանն առաջին անգամ չէ, որ կազմակերպում է յուրատիպ ուսուցողական, դաստիարակչական միջոցառում:

Դպրոցի տնօրեն Ա. Անտոնյանը շնորհակալություն հայտնեց հյուրերին, մասնակիցներին՝ հպարտանալով, որ դպրոցը կրում է Մեծն Թումանյանի անունը. «Թումանյանը արդիական բանաստեղծ է, նրա գաղափարախոսությունը բոլոր ժամանակների համար է»:

Ա. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետարանի
ԿՍ բաժնի մասնագետ

ՀԵ՞Յ, ՃԱՄՓԱՆԵՐ, ՃԱՄՓԱՆԵՐ...

ՄԱՔՍԻՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Լրացավ արդի արձակի երևելի դեմքերից մեկի՝ գրող-հրապարակախոս Մաքսիմ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ծննդյան 85 տարին: Նա հեղինակ է մարդու բարոյա-հոգեբանական աշխարհն արտացոլող պատմվածքների ու ակնարկների («Իմ հին լորենի», «Գյուղացի մարդիկ», «Եվ սիրտն ասաց», «Նարնջագույն գիշերներ», «Շոգ», այլ ժողովածուներ)՝: Արցախահայության կյանքը, նրա ազատագրական պայքարը, ըմբոստ ու մարտնչող ոգին և դեպի բարու հաղթանակն ունեցած աննկուն հավատն է արտացոլված նրա «Մենք», «Գնում ենք արևին դիմավորելու», «Արցախ իմ, ցավ իմ» ժողովածուների պատմվածքներում: Հրատարակվել են նրա ստեղծագործությունների չորսհատորյակը, «Հարար-Հարար» ժողովածուն, «Հաստվածների խնջույքը» գիրքը:

«Լուսարար»-ը շնորհավորում է Մաքսիմ Հովհաննիսյանին ծննդյան 85-ամյակի առթիվ, մաղթում ամուր առողջություն, ստեղծագործական բեղուն կյանք:

Մաքսիմ Հովհաննիսյան գրողի ինքնատիպությունը պայմանավորված է ոչ միայն ժանրային առանձնահատկություններով, թեմատիկ բազմազանությամբ, բարձր ինտելեկտուալությամբ, հույզերի ու զգացմունքների բնականությամբ, այլեւ կենդանի, պարզ ու գունեղ լեզվով:

Ինչպես Հովհ. Թումանյանը, Ակ. Բակունցը, Հր. Մաթեւոսյանը եւ ուրիշներ, Մաքսիմ Հովհաննիսյանը նույնպես գրական լեզվի հարստացման հարցում մեծ տեղ է հատկացնում բարբառին: Գրողի ստեղծագործություններում մեծ թիվ են կազմում անհայտ ծագման եւ բուն բարբառային բառերը, որոնք հնդեվրոպական ծագում ունեն եւ չեն անցել գրական լեզու, սակայն պահպանվել են հայերենի բարբառներում ու խոսվածքում, ինչպես՝ **պողվատ, չանա, չոլախ, կյեվաթ, ճուվարան, ղազան, շլոր, խոնչա, դանգլա, ճոնդ, մթնաժոռած, թալաշա, փլիքան, ցաք, լխկվել, ռեխկալի, ռեխ, թոթխար, հախռել, կոթ, ղոչ** եւ այլն: Թումանյանը գավառների կենդանի բարբառներին անտես չանելու կամ վերեւից չնայելու խորհրդով նկատում է. «Էդ բարբառներից ամեն մինը ավելի շատ ուժ ու կենդանություն ունի իր մեջ, քան մեր եղած գրական լեզուն: Սա դեռ չի կազմակերպված եւ չի էլ կազմակերպվելու, մինչեւ որ մեր ժողովրդի լեզուն իր բոլոր դաշտերից, սարերից ու ձորերից կենդանի վտակներով կգա միանալու սրա մեջ, եւ բոլոր բարբառները հանդես բերեն իրենց զանգերը»: Այնուհետեւ նա պարզաբանում է. «Ես չեմ ասում զուտ բարբառով գրեցեք ձեր հոդվածները, բայց մեծ իրավունք տվեք բարբառներին, նրանց բառերին, ոճերին ու ձեւերին»: Ինչ վերաբերում է Բակունցին, ապա գրական լեզվի կառուցվածքի մեջ տեղ տալով նաեւ փոխառություններին (ռուսաց լեզվից) եւ գրաբարին (հատկապես ժողովրդական բարբառներում պահպանված գրաբարյան բառաձեւերին)՝ գրողն, այնուամենայնիվ, գեղարվեստական գրականության ոճալեզվական մայր ավազանը համարում էր ժողովրդական բառագանձն ու ժողովրդական լեզվակառուցվածքները՝ դրանց վրա դնելով ոճային-արտահայտչական կարեւորագույն խնդիրների լուծում: Մաքսիմ Հովհաննիսյանի հերոսներն Արցախ աշխարհի մարդիկ են՝ իրենց առօրյայով ու կենցաղային խնդիրներով, ուստի այդ մարդկանց եւ նրանց միջավայրին տիպիկ երանգավորում տալու համար հեղինակը դիմում է մայրենի բարբառին՝ ապահովելով համապատասխան խոսքային միջավայր: Նրա հերոսների խոսքն աչքի է ընկնում բնականությամբ, համ ու հոտով, հատկապես երբ այն ուղեկցվում է ժողովրդական խոսքով՝ ա. անեծքներով՝ ***Այ քո հերն եմ անիծել, Հերամեռդ թաղեմ, Հողը Փառանձեմի գլխին, Փուչ մնաս, որ փուչ եղար, Գլխիս քար ընկնի, Ցեխծոր շինողի հոր ոսկորները շունը քաշ տա, Հողեմ գլուխդ... եւ այլն,*** որոնց մի մասի ժխտական կազմությունը խոսքին հաղորդում է հորդորական կամ հանդիմանական երանգ՝ ***Քո հոր գլխին քար ընկնի, Մաշոյի երեսը կտրվի:*** բ. հայհոյանքով՝ ***Դե ձենդ կտրի..., Դրա ռեխավեր..., Կուտեք՝ հա՜..., ձենդ կտրիր, ռեխդ փակիր, Վա՜յ, ես ձեր ծնված օրը..., Քո օբեխես նախագահիդ...,*** գ. օրհնանքներով՝ ***Ոտագալիքս բարի լինի էս օջախում , Մարդուս վերջը լինի բարի, Ուշ գիշերով խեր լինի:*** Թերեւս տեղին է նշել հայտնի լեզվաբան Վ. Առաքելյանի այն ընդգծումը, թե «մեր գրական լեզվի երակային առողջ զարկերը, համն ու հոտը կենդանի հնչերանգները, գունեղ արտահայտությունները, թեւավոր խոսքերը եւ այլն գալիս են բարբառներից»: Հովհաննիսյանի արձակում շատ են նաեւ ժողովրդախոսակցական այն բառերը, որոնք գրական լեզվի համապատասխան բառերի հնչյունափոխված ձեւերն են՝ ***էս (այս), էդ (այդ), էստեղ (այստեղ), մեր (մայր), հեր (հայր), էսօր (այսօր), էդպես (այդպես), գել (գայլ)*** եւ այլն: Գրողի ստեղծագործություններում ***էս, էդ, էդքան*** եւ այլ դերանունների գործածությունն օրինաչափ է՝ պայմանավորված դրանցում արծարծվող թեմայով: Բերված դերանունների կիրառության հիմնական ոլորտն ուղղակի խոսքն է. ***«- Էդ ինտելիգենտներին պետք է քշել մեր երկրից», «- Էն էլ չգիտե՞մ, որ հաշվապահների տասից ինն ուտում է»:*** Ինչպես գրականագետ Լ. Հախվերդյանն է նշում, «էս» (այս) եւ նման զուգաձեւերից ամեն մեկն ունի գործածության իր տեղը»: Հովհաննիսյանը հմտությամբ օգտագործում է նաեւ փոխառություններ, որտեղ մեծամասնություն են կազմում Ղարաբաղի բարբառին անցած, ժողովրդի կենդանի խոսքի կարեւոր բաղադրամաս դարձած ռուսերենից կամ վերջինիս միջոցով փոխառված որոշ բառեր՝ ***ինտելիգենտ, պլաստինկա, ստիլյագա, տրամվայ, շտրաֆնիկ, սենտիմենտալ, կոմպլիմենտ, նաչալնիկ, ռիժի, միլիցա, կոմպրես, ինկուբատոր, սարայ, մանեթ, ֆրոնտավիկ, բունկեր, կանցելյար, չորտ, մինիստր, պրիկազ, վերտալյոտ, կոռումպացված, կնյազ*** եւ այլն: Հետաքրքիր է Հովհ. Թումանյանի դիտարկումը փոխառությունների վերաբերյալ. «Ոչ մի լեզու, ինչքան էլ իր ազգային բնավորությունը պահի ու զարգացնի, չի կարող փոխառություններից ազատվել եւ կղզիանալ: Ընդհակառակը, քանի զարգանա, էնքան ավելի շատ, ավելի բարդ պահանջների պիտի պատասխանի եւ ավելի շատ ու առատ պիտի թե՛ փոխ առնի, թե՛ փոխ տա: Եվ միշտ ավելի լավ է չունեցած բառը փոխ առնել, քան ճգնել անպատճառ ստեղծել կամ թարգմանել ու ֆրակը շինել պոչագեստ, կոտլետը կողիկներ կամ ռահատ լոխումը հանգստապատառ»: Գրողի ստեղծագործություններում տեղ են գտել մի շարք նորակազմություններ, որոնք մեծ մասամբ բարբառային «նախաձեւերի»՝ հեղինակի կողմից մշակած-գրականացրած տարբերակներն են: Օրինակ՝ ***կարկուտաթակ, խոսքատակ, հեռաքաշ, մարդաթող, կուլակապ, խոսքահոտ, կեսօրահաց, խոսքուծեւ, ճտահանել, քնահարբ, կողքահար*** եւ այլն: Մաքսիմ Հովհաննիսյանի արձակում ուշագրավ են նաեւ բարբառային հարադրությունները՝ ***լեն ու բոլ, քունջ ու պուճախ, թուփակ-թուփակ*** եւ այլն: Հարադիր բարդությունների մեջ հետաքրքիր է այն հարադիր բայերի կառուցվածքը, որոնց անվանական բաղադրիչը բարբառային է, իսկ բայական բաղադրիչը՝ գրական, ***օր՝ ճիտը գցել, աչքը կոխել, հեռ գալ, կոտր ընկնել, մրափ մտնել*** եւ այլն: Հովհաննիսյանի լեզվաոճական յուրահատկություններից մեկն էլ ժողովրդախոսակցական, ինչպես նաեւ գրական լեզվում իր տեղը գտած բառակրկնությունների կիրառությունն է: Այսպես՝ ***«Լուսադեմին ծեր դռնապանը հատիկ-հատիկ հավաքում է բառերը, որոնք հետո դառնում են կուտակ-կուտակ ամպեր», «Քարտաշ Մուրադի տղան պրոֆեսորի հետ նարդի է խաղում ու կումկում սուրճ խմում», «Անմարդ Օսաննան մեծ-մեծ, չաղ-չաղ կռներ ունի» , «Օսանի կռներն անամոթ-անամոթ մերկացված են», «Երեխաներն անուշ-անուշ քնած էին»*** եւ այլն: Մ. Հովհաննիսյանի պատմվածքներն ու ակնարկներն իրենց լրջության, առաքինի ձեւավորման հետ մեկտեղ պարունակում են պատկերակերտ ձայնարկություններ, կոչեր ու ափսոսախառն արտահայտություններ, որոնց հաջորդող բազմակետերի լռության արանքում ամենակարեւոր բառերն ու զգացմունքները բառացիորեն չեն ասվում՝ հաղթահարվում են լռությամբ: Եվ ի հավելումն այդ ամեն ինչ ասող լռության՝ բառերը շարունակում են եւ բառադասման անամբողջ պատկերը դառնում է ամբողջական: Հեղինակի պահ-զգացմունքի նկարագրական վերլուծումը եւս տպավորիչ ու շոշափելի է դարձնում իրապատկերը: Կոչականների եւ մի շարք այլ պատկերավոր ձայնարկությունների ու նրանց շարունակող բազմակետերի ներգործության ձեւակերպումներում առերեսվում են ապրումների, հատկապես ցավի ու տառապանքի ներսն ու դուրսը. ***«Արշակը իջնում է, որ ջրաղացի ջուրը կտրի, ու հրացանից տրաքոց է լսվում՝ վա՜խ... Սաքունց Բախշու ունքը վեր է թռչում, դեմքի մկանը ուզում է դողալ, բայց պահում է, ինքն էլ չիմանալով՝ ինչպես», «Էհ, մեկ չէ՞ քեզ համար, թե ում հետ կամուսնանա», «- Օհո՜, դուք արդեն սկսել ե՞ք,- նկատելով սեղանին դրված կոնյակի շիշը՝ ասում է Աշխենը եւ հրավիրում մեզ սեղան նստել»*** եւ այլն: Հովհաննիսյանն օգտագործում է նաեւ գրաբարյան արտահայտություններ՝ 5-րդ դարի եւ Ամարաս վանքի անդրադարձման ժամանակ: Օրինակ՝ ***«մտոք երեխաներ», «զբանս հանճարոյ», «ցորյան»*** եւ այլն: Արձակագիրն իր պատկերավոր մտածողության շնորհիվ հասնում է ասելիքի կոնկրետության, նկարագրվող երեւույթի բազմակողմանի բացահայտման, խոսքի գեղարվեստական հնչողության, հուզականության: Ըստ բանասեր Ա. Մարությանի՝ «Համեմատության ճիշտ կառուցումը պայմանավորված է գրողի գեղարվեստական մտածողությամբ, կախված է նրա դատողականությունից, արտաքին առարկաների ու երեւույթների միջև եղած կապերն ու ընդհանրությունները տեսնելու, դրանք բանաստեղծորեն ընկալելու եւ զգալու ունակությունից»: Մ. Հովհաննիսյանի տողը հարուստ է դիպուկ համեմատություններով, տեղին ու նպատակին գործածվող դարձվածներով ու ժողովրդական իմաստություններով, արցախյան հողի ու նրա բարբառի համ ու հոտն իր մեջ ամփոփող բառ ու բանով: Բնավորություն, հոգեվիճակ, կենսակերպ բնութագրող հետաքրքիր համեմատություններն առանձնահատուկ շունչ ու նկարագիր են տալիս գրողի լեզվամտածողությանը: Գրողն իր արժեքավոր գրչի յուրօրինակ դրսեւորումներով, բառային գունավոր խաղով նկարում է կարեւոր բաներ կարեւոր բաների մասին: Եվ եթե բնության գիտակ Համո Սահյանը մարմնավորել, անհատականացրել է բնության այս կամ այն երեւույթը, շարժը, ապա Հովհաննիսյանի արձակում տեղի է ունենում հակառակ երեւույթը: Նա մարդու այս կամ այն արարքը, բնավորության գիծը, հոգեվիճակը, դիմագիծն ու միմիկան համեմատության մեջ է դնում բնության այս կամ այն դրսեւորման հետ: Այս համեմատություններն իրենց թարմությամբ, կայացած կառույցներով աշխուժություն են մտցնում անգամ դրամատիզմով լեցուն նկարագրություններում: Այսպես՝ ***Համբարձու թփակալած հոնքերն ավելի են իջնում աչքերին, Առավոտյան նախագահի հետ բռնվեց եւ ամբողջ օրը՝ կեղտուբերան ու զզվելի՝ դարձել էր քուլի աղու տանձ, Մեխակը ներսում եփ եկավ, մեջքի սեռով մի կեծություն անցավ, եւ կամքը սկսեց կաշկանդվել, դարձավ օրուկին կարճ կապած զամբիկ ձի՝ ո՛չ բաշը կարող է մեկնել կանաչից մի փոքր կծել, ո՛չ էլ կարող է մեջքի արյունը ծծող բոռերը քշել*** եւ այլն: Հովհաննիսյանն իր ասելիքն ամփոփելով բովանդակալից նախադասությունների մեջ՝ ազատ տարածություն չի թողնում: Նրա լեզվի խտությունը շարունակաբար ճյուղավորվում է՝ հիմք դառնալով յուրօրինակ ոճի դրսեւորման, որտեղ իրենց ուրույն դերն ունեն դարաբաղցու միտքը բնորոշող բարբառային եւ ժողովրդախոսակցական դարձվածքները, առածներն ու ասացվածքները, որոնք բարձրաձայնվում են հենց հերոսների շուրթերով: Օրինակ՝ ***Ձեռը խաղողին չհասավ, թե խակ է, Հաչան շունը չի կծիլ, Լուն ուղտ են դարձնում, բեռնում աքլորին, Փետը վերցնես՝ գող կատուն իր հաշիվը կվերցնի, ճիպոտը քուլիցը կտրել, Ականջների մսերը ուտել, Խոսքը ականջի ետեւը գցել*** եւ այլն: Այն, որ Մաքսիմ Հովհաննիսյանը թե՛ պատմվածքներում, թե՛ ակնարկներում կարեւոր տեղ է հատկացրել բարբառային-ժողովրդախոսակցական բազմաթիվ ձեւերին, բնավ չի նշանակում, թե չի կարող ստեղծագործել «մաքուր» գրական հայերենով: Նրա գրչին փոքրիշատե ծանոթ ցանկացած մարդ կարող է համոզվել նրանում, որ նա լավագույն ձեւով տիրապետում է գրական հայերենի նրբություններին, պարզապես որպեսզի իր ընտրած միջավայրն ու մարդիկ իրենց իրական ու կենդանի պատկերն ու նկարագիրը ստանան, անհրաժեշտ է դիմել մայրենի բարբառի գանձարանին, ինչը տվյալ դեպքում ոչ թե խանգարում, այլ նպաստում է գեղանկարչի նրբությամբ ամենայն մանրամասնությամբ ընդգծելուն եւ Արցախի եւ արցախցու յուրօրինակ դեմքն ու դիմագիծն ընդհանրացնելուն: Ինչպես լեզվաբան Լ. Եզեկյանն է նշում. «Հայ գրողներն առանց վարանելու պետք է բարբառներից վերցնեն այն, ինչը անհրաժեշտ է ու մատչելի, բառային ու քերականական այն ձեւերն ու միջոցները, որոնք չկան գրական լեզվի մյուս ոլորտներում եւ որոնք կարող են դառնալ ընդհանուր գործածական, համաժողովրդական-խոսակցական...»: Մաքսիմ Հովհաննիսյանը, ստեղծելով լեզվաոճական իր ուրույն համակարգը, իր նպաստն է բերում հայ գրականության լեզվի զարգացման գործում:

Ալիսա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Ո՞ՆՑ Է ԺՊՏՈՒՄ ԻՄ ՀՈԳԻՆ...

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈԳՈՎ

Փետրվարի 21-ին Մարտունու Մոնթե Մելքոնյանի անվան մանկապարտեզի վերանորոգված դահլիճում կազմակերպվեց վիկտորինա խաղ-մրցույթ մանկապարտեզի «Արևիկ» և «Զանգակներ» ավագ խմբերի երեխաների միջև: Այն նվիրված էր Մայրենիի միջազգային օրվան և մեր ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին:

Բացման խոսքով հանդես եկավ մանկապարտեզի մեթոդիստ Հասմիկ Մկրտչյանը, որը բարձր գնահատեց օրվա կարևորությունը առաջին հերթին ազգապահպան գործում: Իր սիրելի սանիկներին խորհուրդ տվեց անաղարտ պահել մայրենին, լավ սերտել նրա անմահ գոհարները:

Խաղ-մրցույթը վարում էր մանկապարտեզի հոգեբան Ռուզաննա Բաղրյանը: Խաղի սկզբում ներկայացվեցին կանոնները: Հարցերն ակվարիումի մեջ էին: Հրահանգից հետո յուրաքանչյուր խմբից մեկական երեխա հանում է հարցը և պատասխանում: Բավարար չլինելու դեպքում հարցին պատասխանում է տվյալ խումբը: Եթե հարցին պատասխանում է երեխան, վաստակում է մեկ միավոր, իսկ խումբը՝ 0,5 միավոր:

Խաղն ընթացավ երեք փուլով. յուրաքանչյուր փուլում առաջադրվեց 20 հարց, որին հաջորդեց արդյունքների ամփոփումը: Ամեն ճիշտ պատասխանի դեպքում երեխան կամ խումբը ստացավ իր խմբի անվանմանը համապատասխան նվեր՝ թղթյա զանգակ կամ արև:

Վերջում ժյուրին ամփոփեց խաղի ընդհանուր արդյունքները. 19,5 միավոր հավաքեց «Զանգակ» թիմը, 16,5 միավոր՝ «Արևիկ» թիմը:

Գեղեցիկ կազմակերպված միջոցառումը համեմվեց երկու խմբի կողմից երաժշտական կատարումներով և ավարտվեց համատեղ պարով՝ հավաստելով, որ դա ընդամենը խաղ էր, իսկ երեխաները հավետ ընկերներ կմնան:

Միջոցառման վերաբերյալ վերլուծական և Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ շնորհավորանքի խոսք ասաց տատիկ՝ հայոց լեզվի և գրականության վաստակաշատ ուսուցչուհի, թոշակառու Աիդա Սաղյանը:

Տնօրինությանը, դաստիարակներին, երեխաներին շնորհակալությունը հայտնեց Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Անուշ Հովսեփյանը:

Նոր վերանորոգված դահլիճում մանկապարտեզի տնօրինությունը «Անաղարտ պահենք մայրենին» խորագրով ստեղծել է անկյուն, որի կենտրոնում Մեսրոպ Մաշտոցն է, նրա դիմաց՝ մեր մեծ հեքիաթագիրը: Մի կողմում Հովհ. Թումանյանի հեքիաթներն էին՝ համապատասխան նկարներով, գրքերով, մյուս կողմում՝ մանկապարտեզի առօրյան պատկերող լուսանկարները, որոնք արվել էին տարբեր հանդեսների ժամանակ Թումանյանի հեքիաթների հիման վրա երեխաների համար դաստիարակների բեմականացմամբ:

Տնօրեն Իրինա Ղուկասյանը կարևորում է այսօրինակ միջոցառումները՝ ընդգծելով, որ դրանք զարգացնում են երեխայի մտավոր ներուժը, բացահայտում կարողությունները, ուսուցանում ու ճանաչելի դարձնում նրանց շրջապատող աշխարհը:

Խոսելով «Անաղարտ պահենք մայրենին» խորագրով անկյունի ստեղծման նպատակի մասին՝ տնօրենն առանձնացրեց երկու կարևոր հանգամանք. տարին Թումանյանական է, հայտարարված է Մայրենի լեզվի միամսյակ, որի նպատակն է անաղարտ պահել մայրենի լեզուն, երեխաներին կառչած պահել հայոց լեզվին, դաստիարակել հայրենասիրության ոգով:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ
ք. Մարտունի

ՄԱՅՐԵՆԻՆ ԻՄ ՀՈԳՈՒ ԼԵԶՈՒՆ Է

«Մայրենին իմ հոգու լեզուն է» խորագրով Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցում նշվեց Մայրենիի տոնը: Դահլիճի պատերը զարդարում էին բազմապիսի ցուցապաստառներ, որոնք վերաբերում էին այբուբենի ստեղծմանը, այն անաղարտ պահելուն և գալիք սերունդներին փոխանցելուն:

Միջոցառմանը, որը կազմակերպել էր դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Սյուզաննա Աղաջանյանը 6-րդ դասարանցիների մասնակցությամբ, ներկա էին դպրոցի տնօրինությունը, ուսուցիչներ, աշակերտներ:

«Հայաստան» երգի հնչյունների ներքո դպրոցականները վառվող մոմեր դրեցին Մեսրոպ Մաշտոցի նկարի դիմաց՝ խոնարհվելով նրա վեհության առջև:

Այսօր աշխարհում բազմաթիվ լեզուներ կանգնած են վերանալու վտանգի առաջ: Այդ պատճառով կարևոր են դպրոցներում կազմակերպվող նման միջոցառումները, որոնք ուղղված են հարազատ լեզվի պահպանությանն ու պաշտպանությանը: Այս կերպ նաև աշակերտների մոտ արմատավորվում է այնպիսի գիտակցություն, որ նրանցից յուրաքանչյուրի ուսերին է դրված մայրենի լեզուն անաղարտ պահելու և սերունդներին փոխանցելու պարտականությունը:

Փետրվար ամսում դպրոցում մի շարք միջոցառումներ են կազմակերպվել՝ նվիրված Մայրենի լեզվին: Անցկացվել են շարադրությունների, չափածո ստեղծագործությունների, ասմունքի մրցույթներ, որոնց դպրոցականները մասնակցել են մեծ ակտիվությամբ:

Մայրենիի օրվան նվիրված միջոցառումը եզրափակում էր միջոցառումների շարքը: 6-րդ դասարանցիները ներկայացրին այն դժվարին ու քարքարոտ ճանապարհը, որի միջով անցել է մեր լեզուն և հասել մեզ: Նրանք երգերի ու պարերի միջոցով փառաբանեցին մայրենի լեզուն, ներկայացրին նշանավոր հայերի ասույթներն ու աշխարհի հայտնիների կարծիքները մեր լեզվի մասին: Ցուցադրեցին փոքրիկ բեմադրություն տառերի գյուտի մասին՝ հարգանքի տուրք մատուցելով Մեսրոպ Մաշտոցին, նրա ազգապահպան ու հերոսական գործին:

Ակնհայտ էր հայոց լեզվի ուսուցչուհի Սյուզաննա Աղաջանյանի և դասղեկ Նելլի Ասլանյանի համատեղ նպատակասլաց աշխատանքը, ինչի արդյունքում հանդիսականներն ականատես եղան գեղեցիկ ու բազմաբովանդակ միջոցառման:

Այս մասին բարձրաձայնեց նաև տնօրեն Մարելլա Ավանեսյանը՝ փաստելով, որ, իրոք, գեղեցիկ ու բովանդակալից էր միջոցառումն իր ասելիքով, աշակերտներն էլ իրենց բեմական վարպետությամբ կարողացան ներկաներին հաղորդել օրվա խորհուրդը: Նա կոչ արեց աշակերտներին անաղարտ պահել մայրենի լեզուն, քանզի այն սերնդեսերունդ փոխանցելու վեհ առաքելությունը նաև նրանց է վերապահված:

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՔՆԱՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐՅԱՆ

Քնարավանի միջնակարգ դպրոցի երիտասարդ մասնագետները բարեխղճորեն են կատարում իրենց մանկավարժական աշխատանքը:

Դրա վառ օրինակներից է վերջերս բնագիտական առարկաներից անցկացված միջառարկայական վիկտորինան՝ Հասմիկ Մեդոյանի ղեկավարությամբ: Վիկտորինային մասնակցում էին 5-րդ, 6-րդ և 7-8-րդ դասարանների աշակերտները: Նրանց ցուցաբերած բնագիտական գիտելիքները վկայում են մանկավարժի մասնագիտական բարձր որակի և փորձի մասին:

Դրան հաջորդեց առաջին դասարանցիների «Դեպի բառերի մոլորակ» ուսումնական պաստառի միջոցով բաց դասը: 6-ամյա երեխաները թիմային աշխատանքը կատարեցին վստահ, առանց բարդույթի: Խաղուսուցման նպատակն էր ամրապնդել իրենց իմացած բառապաշարը և ուսուցանել նորը: Վերջում հաղթող թիմը պարգևատրվեց: Նմանատիպ դասաժամեր դպրոցում հաճախակի են կազմակերպվում:

Քանի որ թումանյանական օրեր են, շաբաթն ամփոփվեց Թումանյանի 150-ամյակին նվիրված միջոցառումով, որը կազմակերպել էր դպրոցի փոխտնօրեն Շուշան Եփրեմյանը:

Միջոցառումը կրկնակի տոն դարձավ տնտեսագիտական համալսարանի ուսանողների անակնկալ այցի շնորհիվ: Նրանք աշակերտներին զանազան գրքեր և քաղցրավենիք նվիրեցին:

Ուրախալի է, որ աշակերտների թիվն աճում է:

Մ. ՍԱՐԳՍՅԱՆ
Քնարավանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

ՕՐՎԱ ՇՆՉՈՎ

ԱրՊՀ-ում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ նվիրված մեծանուն գրող, ազգային և հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին: Նշվել է նաև Գիրք նվիրելու օրը:

«Չնայած ապրում ենք 21-րդ դարում, որտեղ գերիշխում է համացանցը, չի կարելի ասել, որ գիրքը կորցրել է իր արժեքը, ավելին՝ գնալով նորից բարձրանում է գրքի նշանակությունը մեր հասարակության մեջ»,- ասաց ուսանողուհի Անի Հայրապետյանը՝ ընդգծելով, որ գիրքը մարդու ընկերն է, իսկ ընկերներին պետք է կարողանալ ընտրել:

«Գիրքը մարդու ամենալավ, ամենահավատարիմ ընկերն է, որի միջոցով ստանում ենք գիտելիք, իսկ գիտելիքը ամենակարևոր ուժն է: Եթե ունես գիտելիք, ուրեմն ունես արժևորման ճիշտ համակարգ, կարողանում ես ինքնահաստատվել»,- օրվա առթիվ շնորհավորելով՝ ասաց տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ռուզաննա Մանգասարյանը՝ ուսանողներին կոչ անելով ընթերցել նշանավոր գրողների ստեղծագործությունները: Նա նշեց, որ այսօրվա երիտասարդները տեղեկատվությունը ստանում են հիմնականում համացանցից, և այս միջոցառմամբ փորձել են նրանց ուշադրությունը սևեռել դեպի տեղեկատվության ձեռքբերման և գիտելիքի կուտակման իրական աղբյուրը:

Օրը ԱրՊՀ-ում նշանավորվեց ուսանողներին գիրք նվիրելով: Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ գրքեր նվիրեցին ուսանողներին:

Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ բնագիտական ֆակուլտետի ուսանողները կազմակերպել են ինտելեկտուալ խաղ-մրցույթ: Նպատակն էր ուսումնական գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր, ստուգել ուսանողների իմացության աստիճանը հայ նշանավոր գրողի՝ Ամենայն հայոց բանաստեղծի կյանքի, գործունեության և ստեղծագործության վերաբերյալ: Հաղթող թիմերը պարգևատրվեցին պատվոգրերով:

Անգելինա ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Լրագրություն բաժնի ուսանողուհի

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ, ՀԱՐՑԱՏՈՄՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՆՄՈՒՇՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայ գրականության հարցատոմսերը կազմվում են ըստ ստորև ներկայացրած հարցաշարի: Հարցաշարը կազմված է 7-9-րդ դասարանների գրականության ծրագրերի և դասագրքերի նյութերի հիման վրա, որոնք հարցաշարում ընդգրկված են ընտրողաբար:

Հարցատոմսը պարունակում է 4 հարց, ընդ որում՝

• 1-ին հարցը վերաբերում է հայ հին, միջնադարյան գրականությանը կամ հայ նոր գրականության սկզբնավորման փուլին, մասնավորապես հետևյալ գրողներին՝ Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան,

• 2-րդ և 3-րդ հարցերը վերաբերում են հայ նոր և նորագույն գրականությանը հետևյալ բաշխումով. հարցերից մեկը պիտի լինի չափածոյից, մյուսը՝ արձակից կամ դրամատուրգիայից,

• 4-րդ հարցը վերաբերում է նորագույն շրջանի (արդի) գրականությանը՝ Հովհաննես Շիրազ, Համո Սահյան, Հրանտ Մաթևոսյան, Վիլյամ Սարոյան:

Ցուցումներ

• Հարցատոմսերը կազմելու համար անհրաժեշտ է կարևորել տարբեր դասարանների նյութերի ընդգրկվածությունը. յուրաքանչյուր հարցատոմս հնարավորինս պետք է պարունակի հարցեր բոլոր երեք (7-րդ, 8-րդ և 9-րդ) դասարանների նյութերից:

• Չափածոյի վերաբերյալ հարցերը հարցատոմսում չպիտի լինեն 2-ից ավելին:

• Ցանկալի չէ երկու արևմտահայ գրողի ներառումը մեկ հարցատոմսում:

• Ցանկալի չէ անգիր իմանալու համար նախատեսված երկու ստեղծագործության ներառումը մեկ հարցատոմսում:

Աշակերտի պատասխանը գնահատվում է առավելագույնը 20 միավորով՝ 5-ական միավոր յուրաքանչյուր հարցի համար: Յուրաքանչյուր հարցի պատասխանին տրվում է՝

• 5 միավոր՝ լիարժեք պատասխանի՝ նյութը ամբողջական, առանց սխալների և վերլուծաբար ներկայացնելու դեպքում,

• 4 միավոր՝ թերություններով կամ ոչ էական սխալներով պատասխանի դեպքում,

• 3 միավոր՝ մի քանի բացթողում կամ սխալներ թույլ տալու դեպքում,

• 2 միավոր՝ նյութը միայն մասնակիորեն ներկայացնելու դեպքում,

• 1 միավոր՝ նյութի մասին սոսկ ընդհանուր պատկերացում ունենալու դեպքում,

• 0 միավոր՝ պատասխանի բացակայության դեպքում:

Հարցաշար

(աստղանիշով նշված են անգիր սովորելու համար հանձնարարվող ստեղծագործությունները)

1. Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը
2. Հայ գրերի գյուտի նախապայմանները
3. Ոսկեդարի հայ պատմիչները, նրանց ստեղծագործությունները, դրանցում պատկերված ժամանակաշրջանները
4. Փավստոս Բուզանդ. աշխատությունը, «Արշակ և Շապուհ» հատվածը
5. «Հայկ և Բել» առասպելի բովանդակությունը
6. Հայկի և Բելի կերպարների համեմատական բնութագիրն ըստ Մովսես Խորենացու
7. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելի բովանդակությունը
8. Արա Գեղեցիկի և Շամիրամի կերպարներն ըստ Մովսես Խորենացու
9. «Արտաշես և Սաթենիկ» առասպելի բովանդակությունը
10. «Արտաշես և Արտավազդ» առասպելի բովանդակությունը
11. «Սասունցի Դավիթ» էպոսի համառոտ բովանդակությունը
12. «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր կերպարները
13. «Սասունցի Դավիթ» էպոսի և Հովհաննես Թումանյանի համանուն պոեմի համեմատական բնութագիրը
14. Դավիթի և Մելիքի կերպարները «Սասունցի Դավիթ» էպոսում
15. Գրիգոր Նարեկացի. ստեղծագործությունը
16. Գրիգոր Նարեկացի. «Մեղեդի ծննդյան»
17. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը. «Երբ սերն ի աշխարհս եկավ» հայրենը
18. Նահապետ Քուչակի ստեղծագործությունը. «Ես աչք ու դու լոյս, հոգի՛»* հայրենը
19. Սայաթ-Նովայի կյանքը և ստեղծագործությունը. տաղը՝ որպես բանաստեղծական կայուն ձև
20. Սայաթ-Նովայի «Աշխարումս ախ չիմ քաշի» տաղը
21. Խաչատուր Աբովյանի կյանքը և ստեղծագործությունը
22. Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի «Հառաջաբանը»
23. Խաչատուր Աբովյանը՝ որպես հայ նոր գրականության հիմնադիր
24. Միքայել Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» բանաստեղծությունը
25. Միքայել Նալբանդյանի «Ազատություն»* բանաստեղծությունը
26. Ռաֆայել Պատկանյանի «Օրորոցի երգ»* բանաստեղծությունը
27. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Սիրել» բանաստեղծությունը
28. Պետրոս Դուրյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Լճակ»* բանաստեղծությունը
29. Գաբրիել Սունդուկյան. «Պեպո». բովանդակությունը, գաղափարը՝ ըստ դասագրքի հատվածի
30. Պեպոյի և Զիմզիմովի կերպարները Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» պիեսում՝ ըստ դասագրքի հատվածի
31. Եղիշե Չարենցի՝ Խաչատուր Աբովյանի և Միքայել Նալբանդյանի մասին ստեղծագործությունները
32. Ռաֆֆի. «Խենթը». դասագրքի հատվածի բովանդակությունը, գաղափարը
33. Վարդանի կերպարը Ռաֆֆու «Խենթը» վեպում՝ ըստ դասագրքի հատվածի
34. Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
35. Հարուստների կերպարները Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» պատմվածքում
36. Լևոնի կերպարը Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքում
37. Շիրվանզադեի «Արտիստը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
38. Հովհաննես Թումանյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
39. Հովհաննես Թումանյանի «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը
40. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադի բովանդակությունը, գաղափարը. գաղափար բալլադի մասին
41. Հովհաննես Թումանյանի «Փարվանա» բալլադը, արտասանել վերջին հատվածը
42. Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի բովանդակությունը, գաղափարը, նախերգանքը*
43. Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը, գաղափար պոեմի մասին, տեսակները
44. Հովհաննես Թումանյանի քառյակները, գաղափար քառյակի մասին, անգիր արտասանել 2 քառյակ աշակերտի ընտրությամբ
45. Ավետիք Իսահակյան. «Սաադիի վերջին գարունը». բովանդակությունը, գաղափարը
46. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Ռավեննայում»* բանաստեղծությունը
47. Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի մրահոն աղջիկ տեսա»* բանաստեղծությունը
48. Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
49. Անտոնիոյի կերպարը Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքում
50. Գրիգոր Զոհրապի «Այրին» նովելի կերպարները
51. Գրիգոր Զոհրապի «Այրին» նովելը. գաղափար նովելի մասին
52. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Աքասիաներու շուքին տակ»* բանաստեղծությունը
53. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Սիրերգ»* բանաստեղծությունը
54. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, գաղափար սոնետի մասին
55. Միսաք Մեծարենցի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Երազ օրեր» բանաստեղծությունը
56. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Տխրություն»* բանաստեղծությունը
57. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Իմ խաղաղ երեկոն է հիմա»* բանաստեղծությունը
58. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի՞թե վերջին պոետն եմ ես»* բանաստեղծությունը
59. Վահան Տերյանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը, «Մի՛ խառնեք մեզ…» բանաստեղծությունը
60. Եղիշե Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծությունը
61. Եղիշե Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի»* բանաստեղծությունը
62. Դանիել Վարուժանի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը. «Ցորյանի ծովեր» բանաստեղծությունը
63. Դանիել Վարուժան. «Ջոն»* բանաստեղծությունը
64. Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
65. Հաճի աղայի և Սրբունի կերպարները Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքում
66. Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի կերպարները
67. Ակսել Բակունցի «Սպիտակ ձին» պատմվածքի բովանդակությունը, գաղափարը
68. Պարույր Սևակի ստեղծագործությունը. «Վարք մեծաց» բանաստեղծությունը
69. Հովհաննես Շիրազ. «Թագադրում» բանաստեղծությունը
70. Հովհաննես Շիրազ. «Հայ ժողովրդի երգը» և «Էքսպրոմտ» բանաստեղծությունները
71. Համո Սահյանի ստեղծագործությունը. «Անունդ տալիս» բանաստեղծությունը
72. Համո Սահյանի ստեղծագործությունը. «Ուր որ նայում եմ» բանաստեղծությունը
